



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4966

វិទ្យាស្ថានប្រាសាទ
ស្ថាបនាសិក្សាស្រាវជ្រាវ
ស្ថាបនាសិក្សាស្រាវជ្រាវ
ស្ថាបនាសិក្សាស្រាវជ្រាវ

059

U-79

059

Ա-79

0 8724 NOV 2011

ԱՒԵՏԻՍ

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՅ

Պատրաստեց՝ Մելիք-ՇԱՀ

Բ. Տ Ա Ր Ի

1921

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

3-րդ տարւոյն, հիմն. 1918 Մայիս 28

ԵՐԵՒԱՆ

Եւ ի հայրապ. 10-րդ տարւոյն Տ. Տ.
Գեորգայ Ե. Կաթողիկոսի Ամ. Հայոց
ԷԶՄԻԱԾԻՆ

ՖՐԷԶՆՕ, ԲԱԼԻՖՕՐՆԻԱ

Ի Մ Խ Օ Ս Ք Ը

Շատեր, զիրք մը հրատարակելու ատեն ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ունին ըսելիք զբքի հրատարակութեան շարժառիթի և նպատակի մասին: Անոր կողքին յաճախ երկրորդ դէմք մըն ալ ուրիշ երկու խօսք ունի ըսելիք, որուն դերը չեմ գիտեր թէ հարկ կը տեսնե՞ն պարզաբանելու «ԱԽԵՏԻՍ»-ի ընթերցողները:

Սակայն ես բան մը չգիտի ըսեմ թէ ինչո՞ւ հրատարակեցի այս գրքոյկը. բաւական է որ ես գիտեմ թէ ինչու հրատարակեցի: Գիտեմ որ մէկը նալին պիտի գարնէ մէկը վրին:

Կուզեմ սակայն, որ ընթերցողները գիտնան թէ աս ու ան ծաղրելով, հեգնելով, կծելով և վրանին խնդալով նպատակ չեմ ունեցած վիրաւորելու անոնց անձը՝ այդ իմ գործը չէ. այլ անոնց հասարակական թերութիւնները մատնանշելու:

Խօսքս լսողը թող հաւատայ, չլսողին և չհաւատացողին արիւն իւր ի գլուխ իւր:

Կատարեալ բան մը հրատարակած ըլլալու յաւակնութիւնն ալ չունիմ. հետեւաբար եթէ սողազրական կամ տեխնիքական թերութիւններ երեւան գան կամքէ՝ անկախ պատճառներով, կը խնդրէի յարգելի ընթերցողներէս, ներողամիտ լինել:

ՄԵԼԻՔ-ՇԱՀ

5392-2011

ԳԼԽԱԻՈՐ ՏՕՆԵՐ ԵՒ ՕՐԵՐ

ԾՆՈՒՆԻ	ԴՇ. Յունուար 6
Առաջաւորաց Բարեկեդդան ԿԻՐ. Փետրվար 7	
Ս. Սպրգիս	ՇԲ. Փետրվար 13
Բուն Բարեկեդդան	ԿԻՐ. Փետրվար 28
ԶԱՏԻԿ	ԿԻՐ. Ապրիլ 18
Երեսման հաշի	ԿԻՐ. Մայիս 16
Համբարձումն	ԵՇ. Մայիս 27
Հոգեգալուստ	ԿԻՐ. Յունիս 6
Բարեկեդդան Ս. Լուս.	ԿԻՐ. Յունիս 27
Գիւտ Նշխարաց Ս. Լուս.	ՇԲ. Յունիս 3
Բարեկեդդան վարդավառի	ԿԻՐ. Յունիս 18
ՎԱՐԳԱՎԱՌ	ԿԻՐ. Յունիս 25
Բարեկեդդան Աստուածածնի	ԿԻՐ. Օգոստ. 8
ՎԵՐԱՓ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ	ԿԻՐ. Օգոստ. 15
Բարեկեդդան Ս. հաշի	ԿԻՐ. Սեպտ. 5
ԽԱԶՎԵՐԱՅ	ԿԻՐ. Սեպտ. 12
Տօն վարագոյ հաշի	ԿԻՐ. Սեպտ. 26
Գիւտ հաշ	ԿԻՐ. Հոկտ. 24
Հրեշտակապետ	ՇԲ. Նոյ. 6
Բարեկեդդան Յիսմակաց	ԿԻՐ. Նոյ. 21
Բարեկեդդան Ս. Յակոբայ	ԿԻՐ. Դեկտ. 12
Ս. Յակոբ	ՇԲ. Դեկտ. 18
Բարեկեդդան Ծննդեան	ԵՇ. Դեկտ. 30

Ա Ն Շ Ա Ր Ժ Տ Օ Ն Ե Ր

Ճրագալոյց Ծննդեան	Յունվար 5—18
Ծնունդ	Յունվար 6—19
Ծննդեան Յաջորդ Օրերը	Յուն. 7—12—20—25
Անուանակոչութիւն	Յունվար 13—26

Տեառնընդառաջ
 Աւետումն Ս. Ածծ.ի Փետր. 14—27
 Ծն. Ս. Ածծ.նի յԱննայէ Ապրիլ 7—20
 Ընծայումն Ս. Ածծ.նի Նոյ. 21 (Դեկտ. 4) Սեպտ. 8—21
 Յղութիւն Ս. Ածծ.նի յԱննայէ Դեկտ. 9—22

Փ Ս Ա Կ Ի Օ Ր Ե Ր

Ծննդեան Ութ օրուայ միջոցին: Յնվ. 8—21 և 12—25:

Յունվար 14էն մինչև Առաջաւորաց բարեկենդան:

Առաջաւորաց ՇԲ. օրէն մինչև բուն բարեկենդան:

Յինանց մէջ, Նոր Կիրակիի ԲՇ. և Վարդավառի Բարեկենդան:

Վարդավառի ԳՇ. և մինչև Ածծ.նի բարեկենդան:

Ածծ.նի ԳՇ. և մինչև Սաշի բարեկենդան:


Սաշի ԳՇ. և մինչև Յիսնակաց բարեկենդան:

Յիսնակաց ԲՇ. և մինչև Ծննդեան բարեկենդան:

Ծանօթ. — Եկեղեցական օրերը կ'սկսին Արեւը մարը մտնելէն ետք: Հետեւաբար Կիրակի երեկոները կարելի է պսակ ընել, եթէ յաջորդ երկու շաբթին պսակի համար թույլատրելի է:



Տիւվերի մեքենայ



Արդուկի մեքենայ

Տէր և Տնօրէն
 ԱՐՏԱՇԷՍ ՊԵՐՊԵՐՊԱՇԵԱՆ

FRESNO, CAL.
 805 JAY STREET.
 PHONE 3255

Arlington Steam Cleaners
 CLEANING, PRESSING, DYEING & REPAIRING
 All kinds of hats cleaned
 WE CALL & DELIVER

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

1921

Փրկչական թուականին

Եւ բուն տոմ. թուականին Հայոց 4313-4314

Եւ փոքր տոմ. թուին Հայոց

ՌՅՀ — ՌՅՀԱ. (1370-1371)

Գիր տարւոյն է՝ Ռ

Եօթներեակ՝ Ե

Վերադիր՝ Գ

Տահուտէր՝ ԱՂԵՂՆԱԻՈՐՆ

Յ Ո Ի Ն Վ Ա Ր 31 Օ Ր

Ն Ո Ր

Հ Ի Ն

- 1 — ՇԲ. Տարեմուտ 1921 թւկ. ըստ Նոր տոմարի: Տօն սրբոյն նախավայի և հայոց անդրանիկ թագաւորին Արգարի:
- 2 — *ԿԻՐ. Ե. Յիսնակաց:
- 3 — ԲՇ. Աբրահամու և Խորէնայ և անարծաթ ժշկաց՝ Կողմայի և Դամիանոսի:
- 4 — ԳՇ. Տօն սրբոյն Աստուածատրոյ վկային:
- 5 — ԴՇ. Պահֆ: Երեկոյեան նախատօնակ:
- 6 — ԵՇ. Տօն Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն:
- 7 — ՈԻՐ. Պահֆ: Երեկոյեան նախատօնակ:
- 8 — ՇԲ. Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին:
- 9 — *ԿԻՐ. Զ. Յիսնակաց: Երեկոյեան նախատօնակ:
- 10 — ԲՇ. Առաքելոյն Պետրոսի և Պօզոսի: Երեկոյեան նախատօնակ:
- 11 — ԳՇ. որդւոյն որոտման՝ Յակոբայ առաքելոյն և Յովհաննու աւետարանչին: Բարեկենդան Մենդեան:
- 12 — ԴՇ. Պահֆ:
- 13 — ԵՇ. Պահֆ:
- 14 — ՈԻ. Պահֆ: ՏԱՐԵՄՈՒՏ և ԿԱՂԱՆԴ 1921 թւկ. Քս.ի, ըստ հին տոմարի: Յնվ. — 1

15 — ՇԲ. Պահֆ: <i>Բարսեղի</i> հայրապետին և եղբոր <i>Գրիգորի</i> :	— 2
16 — *ԿԻՐ. Է. Յիսնակաց: Պահֆ:	— 3
17 — ԲՇ. Պահֆ:	— 4
18 — ԳՇ. Նաակատիֆ: ձրագալոյց Մննդեան: ԽՔՈՒՄ: Երեկոյին՝ պատարագ և նախատօնակ:	— 5
19 — *ԳՇ. Տօն ԾՆՆՎԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ ԲԻՒՍՏՈՍԻ: Տաղար. տօն ութ օրեայ: Միջոց ուտիֆ 4 շաբաթ և 5 օր:	— 6
20 — *ԵՇ. Բ. օր Մննդեան: <i>Մեռելոց</i> :	— 7
21 — ՈՒՐ. Գ. օր Մննդեան:	— 8
22 — ՇԲ. Դ. օր Մննդեան:	— 9
23 — *ԿԻՐ. Ե. օր Մննդեան:	— 10
24 — ԲՇ. Զ. օր Մննդեան:	— 11
25 — ԳՇ. Է. օր Մննդեան:	— 12
26 — ԴՇ. Ը. օր Մննդեան և անուանակոչութեան <i>Յս. Քս. Ի</i> :	— 13
27 — ԵՇ. Տօն Մննդեան սր. Յովհաննու <i>Կարապետին</i> :	— 14
28 — ՈՒՐ. Պահֆ:	— 15
29 — ՇԲ. <i>Պեարոսի</i> հյրպ., վլասայ եպ. և Արիստղոմայ սրգ.:	— 16
30 — *ԿԻՐ. Ա. Կիրակի յետ Ութօրէից Մննդեան:	— 17
31 — ԲՇ.	— 18



Ն Ո Ր

Հ Ի Ն

1 — ԳՇ.	Յնվ. — 19
2 — ԳՇ. Պահֆ:	— 20
3 — ԵՇ. Եօթն մանկանցն Եփեսոսի:	— 21
4 — ՈՒՐ. Պահֆ: Յիշատակ <i>Յուլիան</i> <i>ճարգարէին</i> :	— 22
5 — ՇԲ. Աքանաս և Կիւրդի հայրապ.	— 23
6 — *ԿԻՐ. Բ. Յետ Մննդեան:	— 24
7 — ԲՇ.	— 25
8 — ԳՇ.	— 26
9 — ԳՇ. Պահֆ:	— 27
10 — ԵՇ.	— 28
11 — ՈՒՐ. Պահֆ:	— 29
12 — ՇԲ.	— 30
13 — *ԿԻՐ. Գ. Յետ Մննդեան:	— 31
14 — ԲՇ.	Փետր. — 1
15 — ԳՇ.	— 2
16 — ԳՇ. Պահֆ:	— 3
17 — ԵՇ.	— 4
18 — ՈՒՐ. Պահֆ:	— 5
19 — ՇԲ.	— 6
20 — *ԿԻՐ. Դ. Յետ ութ. Մն.: Առաջադրաց <i>բարեկենդան</i> :	— 7
21 — ԲՇ. Պահֆ առաջադրաց:	— 8
22 — ԳՇ. Պահֆ Ոռաջադրաց:	— 9

23 — ԴՇ. Պահֆ Առաջաւորաց :	— 10
24 — ԵՇ. Պահֆ Առաջաւորաց :	— 11
25 — ՈՒՐ. Պահֆ Առաջաւորաց :	— 12
26 — ՇԲ. Սարգսի Զօրավարին և որդւոյն նորա Մարտիրոսին և 14 զինուորացն :	— 13
27 — *ԿԻՐ. Ե. Յետ ութ. Ծն. Տեառն ընդառաջ. 40 օրեայ գալստեան Յիսուսի :	— 14
28 — ԲՇ. Ատովմեան գորավարաց մերոյ :	— 15



Մ Ա Ր Տ 31 Օ Ր

Ն Ո Ր

1 — ԳՇ. Սուքիասեան վկայից : Փետր.	— 16
2 — ԳՇ. Պահֆ :	— 17
3 — ԵՇ. Ոսկեանց վկայից :	— 18
4 — ՈՒՐ. Պահֆ :	— 19
5 — ՇԲ. Տօն Սբ. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ :	— 20
6 — *ԿԻՐ. Զ. յետ Ծննդեան :	— 21
7 — ԲՇ. Սրբոյն Մարկոսի եպիսկ. Պիոնի քհնյ. Կիւրեղ և Բենիամիս սրկգ. ևն.	— 22
8 — ԳՇ. Տօն սրբոյ ՂԵՒՈՆԴԵԱՆՅ Բահանայից :	— 23

9 — ԳՇ. Երեկոյեան նախատօնակ :	— 24
10 — *ԵՇ. Տօն սրբոյ ՎԱՐԴԱՆԱՆՅ Զօրավարացն և 1036 ՎԿԱՅԻՑՆ Աւարայրի : Ազգային տօն : Հոգեհանգիստ ննջեցելոց :	— 25
11 — ՈՒՐ. Պահֆ :	— 26
12 — ՇԲ. Տօն Կ. Պօլսոյ 150 ժողովականներու : Երեկոյեան խորանը կը փակուի :	— 27
13 — *ԿԻՐ. Բուն բարեկեհդան :	— 28
14 — ԲՇ. Ա. օր մեծ պահոց : Մարտ	— 1
15 — ԳՇ. Բ. օր մեծ պահոց :	— 2
16 — ԳՇ. Գ. օր մեծ պահոց :	— 3
17 — ԵՇ. Դ. օր մեծ պահոց :	— 4
18 — ՈՒՐ. Ե. օր մեծ պահոց :	— 5
19 — ՇԲ. Զ. օր մեծ պահոց տօն Թէոդոր գորավարին :	— 6
20 — *ԿԻՐ. Է. օր մեծ պահոց : Բ. քառասնորդաց պահոց :	— 7
21 — ԲՇ. Ը. օր մեծ պահոց	— 8
22 — ԳՇ. Թ. օր մեծ պահոց	— 9
23 — ԳՇ. Ժ. օր մեծ պահոց	— 10
24 — ԵՇ. ԺԱ. օր մեծ պահոց	— 11
25 — ՈՒՐ. ԺԲ. օր մեծ պահոց	— 12
26 — ՇԲ. ԺԳ. օր մեծ պահոց տօն Կիրեղ հայրապ. և մօր Աննայի :	— 13
27 — *ԿԻՐ. ԺԴ. օր մեծ պահոց Գ. քառասնորդաց պահոց : Անառակին	— 14
28 — ԲՇ. ԺԵ. օր մեծ պահոց	— 15

29 — ԳՇ. ԺԶ. օր մեծ պահոց	— 16
30 — ԴՇ. ԺԷ. օր մեծ պահոց:	— 17
31 — ԵՇ. ԺԸ. օր մեծ պահոց	— 18



Ա Պ Ր Ի Լ 30 Օ Ր

Ն Ո Ր

Հ Ի Ն

1 — ՈՒՐ. ԺԹ. օր մեծ պահոց Մարտ	— 19
2 — ՇԲ. Ի. օր մեծ պահոց տօն սրբ. Յովհաննու Երուսաղէմայ հայրապ. և հայրապետացն մերոց Յովհան Օճնեցոյն, Յով. Որոտ. և Գր. Տաքեւացոյն:	— 20
3 — *ԿԻՐ. ԻԱ. օր մեծ պահոց: Դ. քառասն. պահոց: Տնտեսին:	— 21
4 — ԲՇ. ԻԲ. օր մեծ պահոց	— 22
5 — ԳՇ. ԻԳ. օր մեծ պահոց	— 23
6 — ԴՇ. ԻԴ. օր մեծ պահոց: Միջինք:	— 24
7 — ԵՇ. ԻԵ. օր մեծ պահոց	— 25
8 — ՈՒՐ. ԻԶ. օր մեծ պահոց	— 26
9 — ՇԲ. ԻԷ. օր մեծ պահոց: 40 մանկունք Սեբաստիոյ:	— 27
10 — *ԿԻՐ. ԻԸ. օր մեծ պահոց: Ե. քառասուն. պահոց: Դատարին:	— 28
11 — ԲՇ. ԻԹ. օր մեծ պահոց	— 29
12 — ԳՇ. Լ. օր մեծ պահոց	— 30
13 — ԴՇ. ԼԱ. օր մեծ պահոց	— 31
14 — ԵՇ. ԼԲ. օր մեծ պահոց Ապրիլ	— 1

15 — ՈՒՐ. ԼԳ. օր մեծ պահոց: Երեկոյնս Նախատօնակ:	— 2
16 — *ՇԲ. ԼԴ. օր մեծ պահոց: տօն Ս. Գր. Լուսարչի: Մուտն ի վիր.	— 3
17 — *ԿԻՐ. ԼԵ. օր մեծ պահոց Զ. քառասուն. պահոց: Գալստեան:	— 4
18 — ԲՇ. ԼԶ. օր մեծ պահոց	— 5
19 — ԳՇ. ԼԷ. օր մեծ պահոց	— 6
20 — *ԴՇ. ԼԸ. օր մեծ պահոց: Աւետ. Ս. Աստուածածնի:	— 7
21 — ԵՇ. ԼԹ. օր մեծ պահոց	— 8
22 — ՈՒՐ. Խ. օր մեծ պահոց	— 9
23 — ՇԲ. ԽԱ. օր մեծ պահոց: Յիշատակ Ղազարու Յարութեան:	— 10
24 — *ԿԻՐ. ԽԲ. օր մեծ պահոց: Է. քառասուն. պահոց: ԾԱՂԿԱԶԱՐԴ: Աստուծո՛ւ Անգստն. Երեկ. Դոնքացիք:	— 11
25 — Ա. ԲՇ. ԽԳ. օր մեծ պահոց	— 12
26 — Ա. ԳՇ. ԽԴ. օր մեծ պահոց: Տասըն Կուսանաց:	— 13
27 — Ա. ԴՇ. ԽԵ. օր մեծ պահոց: Խորով Օծման:	— 14
28 — Ա. ԵՇ. ԽԶ. օր մեծ պահոց: Երկ. Ոսկրայ:	— 15
29 — Ա. ՈՒՐ. ԽԷ. օր մեծ պահոց: Երեկ. Թաղման կարգ:	— 16
30 — Ա. ՇԲ. ԽԸ. օր մեծ պահոց: Նախակտ. և յսթումն Զատկի: Երեկ. Պատարագ և նախատօնակ:	— 17

Մ Ա Յ Ի Ս 31 0 Ր

Ն Ո Ր

	Հ Ի Ն
1 — *ԿԻՐ. ԶԱՏԻԿ: Յարուքիւն Յիսուսի սի: Մեծ տաղաւար: Ապրիլ	18
2 — *ԲՇ. Բ. օր Յիմանց:	— 19
3 — *ԳՇ. Գ. օր Յիմանց:	— 20
4 — ԴՇ. Դ. օր Յիմանց:	— 21
5 — ԵՇ. Ե. օր Յիմանց:	— 22
6 — ՈՒՐ. Զ. օր Յիմանց:	— 23
7 — ՇԲ. Է. օր Յիմանց: Յիշատակ գրւիստուման Յովհ. մկրտչին:	— 24
8 — *ԿԻՐ. Ը. օր Յիմանց: Բ. Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ:	— 25
9 — ԲՇ. Թ. օր Յիմանց:	— 26
10 — ԳՇ. Ժ. օր Յիմանց:	— 27
11 — ԴՇ. ԺԱ. օր Յիմանց:	— 28
12 — ԵՇ. ԺԲ. օր Յիմանց:	— 29
13 — ՈՒՐ. ԺԳ. օր Յիմանց:	— 30
14 — ՇԲ. ԺԴ. օր Յիմանց: Մայիս	1
15 — *ԿԻՐ. ԺԵ. օր Յիմանց: Գ. Աշխարհամատարան և Կանաչ Կիրակի:	— 2
16 — ԲՇ. ԺԶ. օր Յիմանց:	— 3
17 — ԳՇ. ԺԷ. օր Յիմանց:	— 4
18 — ԴՇ. ԺԸ. օր Յիմանց:	— 5
19 — ԵՇ. ԺԹ. օր Յիմանց:	— 6

20 — ՈՒՐ. Ի. օր Յիմանց:	— 7
21 — ՇԲ. ԻԱ. օր Յիմանց:	— 8
22 — *ԿԻՐ. ԻԲ. օր Յիմանց: Դ. Կարմիր Կիրակի:	— 9
23 — ԲՇ. ԻԳ. օր Յիմանց:	— 10
24 — ԳՇ. ԻԴ. օր Յիմանց:	— 11
25 — ԴՇ. ԻԵ. օր Յիմանց:	— 12
26 — ԵՇ. ԻԶ. օր Յիմանց:	— 13
27 — ՈՒՐ. ԻԷ. օր Յիմանց:	— 14
28 — ՇԲ. ԻԸ. օր Յիմանց: Գ. ՏԱՐԵ-ԴԱՐՁ ՀԱՅԱՍ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ.	— 15
29 — *ԿԻՐ. ԻԹ. օր Յիմանց: Ե. Երեւման սուրբ խաչ:	— 16
30 — ԲՇ. Լ. օր Յիմանց:	— 17
31 — ԳՇ. ԼԱ. օր Յիմանց:	— 18

5397-2011



Յ Ո Ւ Ն Ի Ս 30 0 Ր

Ն Ո Ր

	Հ Ի Ն
1 — ԴՇ. ԼԲ. օր Յիմանց: Մայիս	— 19
2 — ԵՇ. ԼԳ. օր Յիմանց:	— 20
3 — ՈՒՐ. ԼԴ. օր Յիմանց:	— 21
4 — ՇԲ. ԼԵ. օր Յիմանց:	— 22
5 — *ԿԻՐ. ԼԶ. օր Յիմանց: Զ. Կիր.	— 23



6 — ԲՇ. ԼԷ. օր Յինանց:	— 24
7 — ԳՇ. ԼԸ. օր Յինանց:	— 25
8 — ԴՇ. ԼԹ. օր Յինանց:	— 26
9 — *ԵՇ. Խ. օր Յինանց: Տօն ՀԱՄԲԱՐՁ ՄԱՆ Յիսուսի: Վինակ:	— 27
10 — ՈԻՐ. ԽԱ. օր Յինանց: Սկիզբն պահոց	28
11 — ՇԲ. ԽԲ. օր Յինանց:	— 29
12 — *ԿԻՐ. ԽԳ. օր Յինանց: Է. Մեծահը- րաշ/ Կիրակի կամ Երկ. Ծաղկ.	— 30
13 — ԲՇ. ԽԴ. օր Յինանց:	— 31
14 — ԳՇ. ԽԵ. օր Յինանց. Յնս.	— 1
15 — ԴՇ. ԽԶ. օր Յինանց:	— 2
16 — ԵՇ. ԽԷ. օր Յինանց:	— 3
17 — ՈԻՐ. ԽԸ. օր Յինանց:	— 4
18 — ՇԲ. ԽԹ. օր Յինանց:	— 5
19 — *ԿԻՐ. Ծ. օր Յինանց: ՀՈԳԵԳԱ- ԼՈՒՍՏ: Պեկտեկոստէ: Բարեկեմ- դան Եղիական պահոց:	— 6
20 — ԲՇ. Պահֆ: Հոգեգալստեան տօն:	— 7
21 — ԳՇ. Պահֆ:	— 8
22 — ԴՇ. Պահֆ:	— 9
23 — ԵՇ. Պահֆ:	— 10
24 — ՈԻՐ. Պահֆ:	— 11
25 — ՇԲ. Պահֆ:	— 12
26 — *ԿԻՐ. Ա.: Յիշատակ Եղիա մարգ. Երեկոյեան նախատօնակ:	— 13
27 — ԲՇ. Տօն Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆ կուսա- նաց: Երեկոյեան նախատօնակ:	— 14

28 — ԳՇ. Տօն Ս. ԳԱՅԵԱՆԵԱՆ կուսանաց—	15
29 — ԴՇ. Պահֆ: Երկ. նախատօնակ:	— 16
30 — ԵՇ. Յովնանու Կարապետին և Աթանա. Եպսկ.ին	— 17



Յ Ո Ւ Լ Ի Ս 31 Օ Ր

Ն Ո Ր	Հ Ի Ն
1 — ՈԻՐ. Պահֆ: Երեկ. նխտնկ.:	— 18
2 — *ՇԲ. Տօն Ս. Գր. Լուսաւորչի: Ելն ի վիրապէ:	— 19
3 — *ԿԻՐ. Բ. զկնի հոգեգլստ. Տօն կարո- ղիկէ Եկեղեցւոյն ԷՋՄԻՍՄՆԻ: Անդաստան:	— 20
4 — ԲՇ.	— 21
5 — ԳՇ. Տօն Նուիա և Մանեա կուսանաց—	22
6 — ԴՇ. Պահֆ:	— 23
7 — ԵՇ. Իշխանացն Սահակայ և Յովիայ—	24
8 — ՈԻՐ. Պահֆ:	— 25
9 — ՇԲ. Տօն ՄԵՄՆ ՆԵՐՍԷՍ հայրապոն.	— 26
10 — *ԿԻՐ. Գ. զկնի հոգեգլստ.: Բարե- կեմդան Լուսաւորչի:	— 27

11 — ԲՇ. Պահֆ: Եպիփան կիպրացոյն և Բաբէլ հայրապետ:	— 28
12 — ԳՇ. Պահֆ: Կոստ. քաղ. և Հեղինէ Դժխոյին:	— 29
13 — ԴՇ. Պահֆ:	— 30
14 — ԵՇ. Պահֆ: Թէոդիտոնի, Թալիլի- այի և 7 կուսանաց էնկիլիփի: Յլս.	— 1
15 — ՈԻՐ. Պահֆ: Երեկոյեան նախատնկ	— 2
16 — *ՇԲ. Տօն գիւտ նշխարացն Ս. Գր. Լուսաւորչի:	— 3
17 — *ԿԻՐ. Գ. Ջկնի հոգեգալստեան:	— 4
18 — ԲՇ. Անտոնի, Թէոփիլոսի ևլն:	— 5
19 — ԳՇ. Դանիէլ մրգրն. և երկց մանկանց	— 6
20 — ԴՇ. Պահֆ: Երեկոյեան նախտնկ.	— 7
21 — *ԵՇ. Տօն քարգմնչցն. ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ:	— 8
22 — ՈԻՐ. Պահֆ:	— 9
23 — ՇԲ. Տօն ՏՐԴԱՏ ԹԳԻՐ. և ԱՇԽԵՆ տիկնոջ և ԽՈՍՐՈՎԻԿՏՈՅՆ	— 10
24 — *ԿԻՐ. Ե. գկնի Հոգեգալստեան:	— 11
25 — ԲՇ.	— 12
26 — ԳՇ. Զաւարեայ մարգարէին:	— 13
27 — ԴՇ. Պահֆ:	— 14
28 — ԵՇ. Եղիսէի մարգարէին:	— 15
29 — ՈԻՐ. Պահֆ:	— 16
30 — ՇԲ. Տօն՝ 12 առֆլց. և 13րդ Պօղոսի:	— 17
31 — *ԿԻՐ. Զ. գկնի Հգեգլստ.: Բարե- կենդան վարդավառի պահոց:	— 18

Ն Ո Ր

Հ Ի Ն

1 — ԲՇ. Պահֆ:	— 19
2 — ԳՇ. Պահֆ:	— 20
3 — ԴՇ. Պահֆ:	— 21
4 — ԵՇ. Պահֆ:	— 22
5 — ՈԻՐ. Պահֆ:	— 23
6 — ՇԲ. Նաւակատիֆ: Ի յիշ. հին տա- պանակին և տօն՝ նորոյս ս. Եկեղ.	— 24
7 — *ԿԻՐ. ՎԱՐԴԱՎԱՌ: Տօն՝ պայծռ. Յս.ի: Տաղաւար: Միջոց ուտիֆ երկու շքք.:	— 25
8 — *ԲՇ. Մեռելոց:	— 26
9 — ԳՇ.	— 27
10 — ԴՇ. Պահֆ:	— 28
11 — ԵՇ. Եսայեայ մարգարէին:	— 29
12 — ՈԻՐ. Պահֆ: Նախատօնակ:	— 30
13 — *ՇԲ. ԹԱԳԵՈՍ առաքելոյն և ՍԱՆ- ԴԻՏՈՅ կուսին:	— 31
14 — *ԿԻՐ. Բ. գկնի վարդվոն.: Օգոստ.	— 1
15 — ԲՇ. ԿիՊր. Եպ. և 45 վկայիցն և կուս. Յուստինիայ, Եսփիմիայ և Բրիստինիայ:	— 2
16 — ԳՇ. Աքանագիւնիայ Եպ. և աշակ.:	— 3
17 — ԴՇ. Պահֆ:	— 4
18 — ԵՇ. Տօն Ադամայ, Նոյի, Աքրահա- մու, Իսահակայ, ևն.:	— 5

19 — ՈՒՐ. Պահֆ: Նախարարական:	— 6
20 — *ՇԲ. Որդոց և բռնանց և Գր. Լուս. Արխաւ., վարք., Յուսիկ, Գրիգորիս և Դան.:	— 7
21 — *ԿԻՐ. Գ. գկնի վարդավառին: Բարեկենդան Ած. պահոց:	— 8
22 — ԲՇ. Ա. օր Պահոց: Մակարայեցւոյն եղիագարու, ֆհնյ. ևն.	— 9
23 — ԳՇ. Բ. օր պահոց: 12 մարգարէից:	— 10
24 — ԴՇ. Գ. օր պահոց: Պահֆ:	— 11
25 — ԵՇ. Դ. օր պահոց: Սոփիայի և Երից դստերց՝ Պիստոսի, Էլյախի և Ագապիի:	— 12
26 — ՈՒՐ. Ե. օր պահոց:	— 13
27 — ՇԲ. Նաւակատիֆ: Սր. Շոզակաթին	— 14
28 — *ԿԻՐ. վերափոխումն Ս. ԱՍՏՈՒԱՅՄԱՅՆԻ: Միջոց ուտիֆ 3 շքք.:	— 15
29 — ԲՇ. Բ. օր Աստուածանի:	— 16
30 — ԳՇ. Գ. օր Աստուածանի:	— 17
31 — ԴՇ. Դ. օր Աստուածանի:	— 18



Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր 30 0 Ր

Ն Ո Ր

Հ Ի Ն

1 — ԵՇ. Ե. օր Աստուածանի: Օգոստ.	— 19
2 — ՈՒՐ. Զ. օր Աստուածանի:	— 20
3 — ՇԲ. Է. օր Աստուածանի:	— 21
4 — *ԿԻՐ. Ը. օր Աստուածանի, Բ. Կիր.	— 22
5 — ԲՇ. Թ. օր Աստուածանի:	— 23
6 — ԳՇ. Յովակիմայ և Աննայի ծնողացն և Աս. ծնի և կանանցն Իւղար.	— 24
7 — ԴՇ. Պահֆ:	— 25
8 — ԵՇ. Երեմիա մարգարէին:	— 26
9 — ՈՒՐ. Պահֆ:	— 27
10 — ՇԲ. Թովմայի, Յակոբայ, Շմաւոնի:	— 28
11 — *ԿԻՐ. Գ. գկնի Աստծծ.ի:	— 29
12 — ԲՇ. Ստեփաննոսի Ուլնեցւոյն ևն.:	— 30
13 — ԳՇ. Եգեկիէլի, Եղօի և Զաքարիոյ՝ հօրն Յովհաննու Մկրտչին:	— 31
14 — ԴՇ. Պահֆ: Սեպտ.	— 1
15 — ԵՇ. Յովհաննու Կարապետին և Յորայ արդարոյն:	— 2
16 — ՈՒՐ. Պահֆ:	— 3
17 — ՇԲ.	— 4
18 — *ԿԻՐ. Դ. Կիր. Աստուածանի:	— 5
19 — ԲՇ. Ա. օր Ս. Խաչի պահոց:	— 6
20 — ԳՇ. Բ. օր Ս. Խաչի պահոց:	— 7

21 — *ԳՇ. Գ. օր Ս. հաչի պահոց: Ծը- նունդն Ս. Աստծծնի. ի յԱննայէ: — 8	
22 — ԵՇ. Գ. օր Ս. հաչի պահոց: — 9	
23 — ՈԻՐ. Ե. օր Ս. հաչի պահոց: — 10	
24 — ՇԲ. Նաւակատիք Ս. հաչի: — 11	
25 — *ԿԻՐ. Տօն՝ վերացման Ս. ԽԱԶԻՆ: Տաղաւար: Երկ.՝ հանդէս խաչ- վերացի Անդաստանով: — 12	
26 — *ԲՇ. Տօն հաչի: Մեռելոց: — 13	
27 — ԳՇ. Եկեղեցւոյ տօն: — 14	
28 — ԳՇ. Եկեղեցւոյ տօն: — 15	
29 — ԵՇ. Եկեղեցւոյ տօն: — 16	
30 — ՈԻՐ. Եկեղեցւոյ տօն: — 17	



Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր 31 Օ Ր

Ն Ո Ր

1 — ՇԲ. Տօն հաչի: Սեպտ. — 18	Հ Ի Ն
2 — *ԿԻՐ. Բ. յետ հաչի: Ս. Գեորգի Բարեկենդան կամ վարագայ հաչի — 19	
3 — ԲՇ. Պահք: Մամասի, Փիլիկտիմոնի և Սիմէօնի: — 20	

4 — ԳՇ. Պահք: Կուսանաց՝ Փեփրոնիայ և Մարիանայ և Շուշանայ՝ դստեր Մեծն վարդանայ — 21	
5 — ԳՇ. Պահք: — 22	
6 — ԵՇ. Պահք: Հայրապետաց՝ Բարադա- մու, Անքիմոսի և Երանոսի: — 23	
7 — ՈԻՐ. Պահք: — 24	
8 — ՇԲ. Գեորգայ Զօրավարին և Ատոկ- տոսի և Ռամանոսի երգեցողին: — 25	
9 — *ԿԻՐ. Գ. յետ հաչի: Տօն՝ վարագայ հաչին: Միջոց ուտիք 8 շաբաթ: — 26	
10 — ԲՇ. Դարբի Գնեցւոյն և ն: — 27	
11 — ԳՇ. Եւստափէոս, իր կնոջ Թէոփիս- տիայ և Երմոնիա, Նիգրատ ընդ. — 28	
12 — ԳՇ. Պահք: — 29	
13 — ԵՇ. Տօն՝ Սահակ, Համազասպ իշխ. — 30	
14 — ՈԻՐ. Պահք: Հոկտ. — 1	
15 — ՇԲ. Տօն՝ Քրիստոսի 72 աշակերտ. — 2	
16 — *ԿԻՐ. Գ. Կիր. յետ հաչի: — 3	
17 — ԲՇ. Փոկաս Հայր. և Երանոսի Ետ. — 4	
18 — ԳՇ. Կուսանացն Թեկզի և ն.: — 5	
19 — ԳՇ. Պահք: — 6	
20 — ԵՇ. Եւարափսէ կսն. Երմոզ քննչ. և ն. — 7	
21 — ՈԻՐ. Պահք: — 8	
22 — ՇԲ. Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ՝ Մեսրոպ Մաշտոցին, Եղիշէ պտմզա., Մով- սէսի քրթղ. Դարբի անյաղք Փիլի.	

	Գր. Նարեկացւոյն, Ներսէսի Շնրի. և Ներսէսի Լամբրոնացւոյն:	— 9
23	— *Կիր. Ե. յետ Խաչի:	— 10
24	— ԲՇ. Գիւտ նշխարացն՝ Գր. Ազուա- նից կաթող. և Թաթուլի, Վարուսի, Թումասի, Անտոնի և 7 խոտանք.	— 11
25	— ԳՇ. Անանեայ, Մատթէի, Բառնա- բայ, Փիլիպպոսի, Յովհաննու ևն.	— 12
26	— ԳՇ. Պահփ:	— 13
27	— ԵՇ. Գիոնիսիոսի, Տիմոթէոսի և Տիտոսի:	— 14
28	— ՈՒՐ. Պահփ:	— 15
29	— ՇԲ. Սրբոց Աւետարանչացն՝ Մատ- թէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու:	— 16
30	— *Կիր. Զ. յետ Խաչի:	— 17
31	— ԲՇ. Ղուկիանոսի ևն. ու Մարթայի և Մարիամու:	— 18



Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր 30 Օ Ր

	Ն Ո Ր	Հ Ի Ն
1	— ԳՇ. Թէոդիտոնի փնչիւն. Զեմոնի և Մակարայ, Ետովսիոյ ևն. Հոկտ.	— 13
2	— ԳՇ. Պահփ:	— 20

3	— ԵՇ. Արտեմեայ վկայից ևն.	21
4	— ՈՒՐ. Պահփ:	— 22
5	— ՇԲ. Երկոտասան վարդապետացն:	— 23
6	— *Կիր. Է. յետ Խաչի: ԳԻԻՏ ԽԱԶ:	— 24
7	— ԲՇ. Անաստասայ ևն.	— 25
8	— ԳՇ. Հեպերիֆեան սրբոց և Սևերիա- նոսի Սեբաստացւոյն ևն.	— 26
9	— ԳՇ. Պահփ:	— 27
10	— ԵՇ. Յովհաննու ոսկեբերան հյրպ.	— 28
11	— ՈՒՐ. Պահփ:	— 29
12	— ՇԲ. Տօն՝ Իիւն և նոր ամեն սրբոց:	— 30
13	— *Կիր. Ը. յետ Խաչի:	— 31
14	— ԲՇ. Սր. Ստեփանոսի հյրպ. ևն. Նոյ.	— 1
15	— ԳՇ. Ակեպսիմեայ եպիսկ. և Յովսէ- փայ փնչ. ևն.	— 2
16	— ԳՇ. Պահփ:	— 3
17	— ԵՇ. Մետրափանոս, Սլիփս. Պօլո- սի խոստովանողին ևն.	— 4
18	— ՈՒՐ. Պահփ:	— 5
19	— ՇԲ. Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակ.	— 6
20	— *Կիր. Թ. յետ Խաչի:	— 7
21	— ԲՇ. Մելիտոսի փնչ. Անտիոփի և Միմասի եգիպտ. ևն.	— 8
22	— ԳՇ. Գիմետրիա վկային ևն.	— 9
23	— ԳՇ. Պահփ:	— 10
24	— ԵՇ. Սրբոյն Գուրեասայ ևն.	— 11
25	— ՈՒՐ. Պահփ:	— 12
26	— ՇԲ. Անտրէի և Փիլիպպոս առփոց.	— 13

27 — *ԿԻՐ. Ժ. յետ հաչի :	— 14
28 — ԲՇ.	— 15
29 — ԳՇ.	— 16
30 — ԴՇ. Պահֆ :	— 17



Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 31 Օ Ր

Ն Ո Ր

1 — ԵՇ.	Նայ. — 18
2 — ՈԻՐ. Պահֆ :	— 19
3 — ՇԲ.	— 20
4 — *ԿԻՐ. ԺԱ. յետ Ս. հաչի : Յիսնակաց բարեկենդան. ընծայումն Ս. Ածն. նի ի տանարն :	— 21
5 — ԲՇ. Պահֆ :	— 22
6 — ԳՇ. Պահֆ :	— 23
7 — ԴՇ. Պահֆ :	— 24
8 — ԵՇ. Պահֆ :	— 25
9 — ՈԻՐ. Պահֆ :	— 26
10 — *ՇԲ.	— 27
11 — *ԿԻՐ. Ա. Յիսնակաց :	— 28
12 — ԲՇ. Յուլիանայ և վասիլուհույ կուսանաց :	— 29
13 — ԳՇ. Ղուկկիանոս ֆենյ. ևն.	— 30

14 — ԴՇ. Պահֆ :	Դեկ. — 1
15 — ԵՇ. Կղիմայ և Բագարատայ :	— 2
16 — ՈԻՐ. Պահֆ : Նախատունակ :	— 3
17 — *ՇԲ. Ս. Առաքելոց և Ս. Լուսաւոր- չացն մերոյ ԳԱԹԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒ- ՂԻՄԷՈՍԻ :	— 4
18 — *ԿԻՐ. Բ. Յիսնակաց :	— 5
19 — ԲՇ. Գիւնարիոս և Մերկերիոս :	— 6
20 — ԳՇ. Յակովբայ և Իրաւափառի :	— 7
21 — ԴՇ. Պահֆ :	— 8
22 — *ԵՇ. Յղութիւն Ս. Ած.նի յԱննայէ :	— 9
23 — ՈԻՐ. Պահֆ :	— 10
24 — ՇԲ. Նիկողայոս և Գրիգոր սֆանչե- լագործ հայրպոց. ևն. :	— 11
25 — *ԿԻՐ. Գ. Յիսնակաց : Ս. Յակոբայ բարեկենդան :	— 12
26 — ԲՇ. Պահֆ : Մինաս, Երմոդիմիայ, Գրարուսի ևն.	— 13
27 — ԳՇ. Պահֆ : Կուրնելիոս, Շմաւոն, Պօղիկարպոս ևն.	— 14
28 — ԴՇ. Պահֆ :	— 15
29 — ԵՇ. Պահֆ :	— 16
30 — ՈԻՐ. Պահֆ : Նախատունակ :	— 17
31 — ՇԲ. Յակոբայ Մծբնայ հայրապետին Մարուգէի ճգնաւոր. և Մելիտոսի Էպիսկ.	— 18

Ն Ո Ր

Հ Ի Ն

1 — *ԿԻՐ. Գ. Յիսնակաց :	Դեկտ. — 19
2 — ԲՇ. Իգտատիոս, Ադդէ և Մարութայ եպս.ին :	— 20
3 — ԳՇ. Թէոպոմոլա եպս.ին ևն.	— 21
4 — ԴՇ. Պահփ :	— 22
5 — ԵՇ. Կուսանաց Ինդոսի ևն.	— 23
6 — ՈԻՐ. Պահփ :	— 24
7 — ՇԲ.	— 25
8 — *ԿԻՐ. Ե. Յիսնակաց :	— 26
9 — ԲՇ.	— 27
10 — ԳՇ.	— 28
11 — ԴՇ. Պահփ :	— 29
12 — ԵՇ. Բարեկեեղան Մննդեան :	— 30
13 — ՈԻՐ. Պահփ :	— 31



ՎՍԵՄԱՇՈՒՔ ՆԱԽԱՐԱՐ

Պարսկական թանկարժէք գորգերով զարդարուած սենեակի մը մէջ, կանաչ կերպասով ծածկընուած դիւանին առաջ, թաւապատ թիկնաթոռի մը մէջ ընկողմանած է Վսեմաշուք Նախարարը :

Իր առանձնասենեակաշխատանոցին մէջ, երբեմբն ալ կը ճեմէր հոգեկան այն ինքնարաւութեամբ՝ զոր կունենային միջնադարեան աւատապետները՝ որոնց հրամանները ամենայն ճշդապահութեամբ կը կատարուէին և որոնց կամքը օրէնք էր ստրուկներու համար : Ու ինք անմատչելի բարձրութիւն արհամարհելի պղտիկութիւններու համար, երջանիկ էր ու հպարտ իր դիրքով և տիտղոսով :

Իր ընդունելութեան պահերուն՝ ներս կը մտնէ վերէն-վար հագուած-սքուած կիրթ ձևերով իր երիտասարդ քարտուղարը և երկիւղած յարգանօք դըլուխ տալով .

—Նորին վսեմութիւն Պ. նախարար :

Նախարարը ծանրօրէն դըլուխը հազիւ դարձուցած, կը դիտէ քարտուղարը, որ զինուորէ մը աւելի ուղիղ, քարացած կեցած է դրան մօտ :

—Երիտասարդ պարոն մը տեսնել կը փափաքի Ձերդ Վսեմութիւնը :

—Ի՞նչ է իր տխուրը կամ պատուանունը :
—Գիւղերէն եկած է և իբր գիւղական համայնքներու ներկայացուցիչ, կ'ուզէ տեսնել Ձերդ մեծութիւնը :

—Յայտնէ՛ իրեն, որ գրադուած եմ, չեմ կրնար ընդունիլ :

Թղթակից մը, որ օտար քաղաքէ եկած էր և քաղաքական անցուղարձերու վրայ կ'ուզէր տեղեկութիւն առնել, կը ներկայանայ քարտուղարին՝ միջնորդելու տեսակցութեան մը համար :

—Թղթակից-աշխատակից մը տեսակցութիւն կը խնդրէ Ձերդ Վսեմապայլութենէն :

—Հա՞յ թէ ...

—Հայ թղթակից մը :

—Է՛հ, գլուխ տարին այդ շարլթանները. դեռ բաւական չէ, որ քանի մը վայրկեան ներկայութեանը ընդունուելու բացառիկ շնորհքը կը վայելեն, կ'ելլեն քննադատելու քրէական յանդգնութիւնն ալ կ'ունենան : Ըսէ որ չեմ կրնար ընդունիլ :

—Երկաթուղային Աշխատատեղական Դաշնակցութեան ներկայացուցիչը տեսակցութիւն մը կը ցանկայ ունենալ Ձերդ Վսեմապատուութեան հետ :

—Գլուխ քերելու ժամանակ չունիմ :

—Կօօսելքատիւներու ընդհանուր միութեան վարչութենէն մէկը կ'ուզէ խնդրոյ մը առթիւ տեսնել Ձերդ Մեծութիւնը :

—Հարուխ եմ առած :

—Արհեստակցական Միութիւններու շրջանային պատգամաւորական ժողովին կողմէ պարոն մը կը փափաքի ...

—Հիւանդ եմ :

—Բանուորական կազմակերպութիւններու կեդրոնական կօմիտէն մէկը կը խնդրէ ...

—Տիղանթէռի ունիմ :

—Առեւտրա-արդիւնաբերական համագործկ. միութենէն երիտասարդ մը ...

—Բացակայ եմ :

—Ուսուցիչ մը կը թական—կուլտուրական ...

—Ժամանակը չէ :

—Հանքային բանուոր ...

—Չեմ ուզեր :

—Աձխային ...

—Բաւական է : Պարապ բաներով չեմ կրնար ըզբաղիլ և յետոյ ընդունելութեան ժամերս փակուած են :

Կէս ժամ յետոյ քարտուղարը կրկին ներս մըտաւ և խորին պատկառանքով՝

—Ձերդ Վսեմութեան այցի է եկեր Նորին Վսեմաչուք ...

Յանկարծ նախարարը կը ցատկէ նստած տեղէն և մինչև սանդուխներուն գլուխը կը վազէ դիմաւորելու Նորին Վսեմութիւն Ք., որ հագած էր սև ուշտինկոթ, ճերմակ ժիլէ, սիլինտր դլխարկ, լուստրին կօշիկ և ունէր փղոսկրէ գլխով ոսկէհիւս ձեռնափայտ մը :

—Արդեօք չե՞մ խանդարեր Նարին վսեմութիւնը :

—Քաւ լիցի : Ձերդ վսեմութիւնը թող շնորհ ընէ իր պատուաբեր այցելութիւնը յաճախակի դարձնելու, որուն համար, թոյլ տուէ՛ք յայտնել իմ կանխեալ շնորհակալութիւններս :

—Ձերդ վսեմութեան սոյն ֆօմրլիմանները անյեղլի ապացոյցներն են Ձեր բարձր ազնուականու-

թեան, որու փոխարէն թոյլ տուէ՛ք ինձ եւս յայտնել խորին շնորհակալութիւններս և մեծարանքներուս անկեղծ հաւաստին :

—Կրնա՞մ հարցնել Նորին վսեմութեան ազնւուական Տիկնոջ որպիսութիւնը :

—Ձերդ մեծութեան առողջութեան աղօթող է : Իսկ ի՞նչպէս է Ձեր ազնուաշուք Տիկինը :

—Իր յարգանքները կը մատուցանէ Ձերդ վսեմ մափայլութեան :

—Միշտ պատուեցէք մեզ Ձեր բարձր ներկայութեամբ :

—Միշտ հրամմեցէ՛ք :

—Շնորհակալ եմ :

* * *

—Աղբա՛ր, տեսա՞ր մի նախարարը, ատանկ պատուաւոր մարդոց հետ կը տեսնուին : Դա շնակցակա՞նն ալ նախարար կըլլայ եղեր : Դեռ շնորքով փողկապ կապել մը չեն գիտեր . գրպաննին սանթիմ մը չկայ . ազնուական չեն . մարդավարի տուն տեղ մը չունին : Ամէն մարդու հետ կը տեսնուին : Գեղացի է արհեստաւոր է, համալ է, ֆէմբլմէն է, ազնուական է, կոմս է, իշխան է . տարբերութիւն չեն դներ : Արհեստաւորներու հետ տեսնուող մարդը ի՞նչպէս կըրնայ տեսակցիլ Կրէյի մը, Ուիլսոնի մը, Քլէմանսօյի մը կամ Վէնիզոլոսի մը հետ : Մարդ քիչ մըն ալ դիրքը պահելու է— աւելցուց քաղաքական և դիւանագիտական գործերու հմուտ և ազգասէր մէկ բարեկամ :

Ը Ն Կ Ե Ր Ա — Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն
Ք Ա Ր Ո Յ Ա — Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Չ Ա Կ Ա Ն
Ս Ի Ր Ա Յ Ի Ն — Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն

Ձ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք Ն Ե Ր

Յովհաննէս սրճարանին անկիւնը, սեղանի մը առջ նստած է և դլուխը ձեռքերուն մէջ առած կը մըտածէ : Իր ծանօթներէն մէկը կը մօտենայ և .

—Հըլօ, ծան, ի՞նչպէս ես :

Յովհաննէս առանց շարժելու՝ ինքնիրեն .

—120 էյքըրը 100,000 տօլար . 20,000 տարեկան քրէփ :

—Տնեցիները ի՞նչպէս են :

—11,000 քէշ կուզեն :

—Յարդանքներս հաղորդէ մայրիկիդ և տիկնոջ :

—Անգամ մը որ 40 ը ծախէի 120 մը առնէի, ալ ձէփերը թող աշխատին դուն կե՛ր :

• • •

Յրէզնոյաբնակ երկու Ռամկավարական ընկերներ՝ Հ. Յ. . . եան և Կ. Կ. . . եան, որոնք անլուր խաչակրութիւն մը սկսած էին Աղատ սիրոյ կարծեցեալ քարոզիչներու դէմ, յանուն Հայ ժողովրդի ընտանեկան նուիրական օրէնքներուն և աւանդական սլրութեան, կ'ամուսնանան իրենց . . . եղբոր կիներուն հետ :

*
* *

Նիւ-Յօրքաբնակ («բարոյազէտ») պատուելի մը
իր քարոզներէն մէկուն մէջ կ'ըսէ .

«Մէկը որ ծառ մը կը տնկէ, կը խնամէ, կը մեծ-
ցընէ, պէտք է որ անոր պտուղը առաջին անգամ ինք
վայելէ»:

Մեր պատուելին, որ սուտ խօսիլ չի գիտեր,
իր ըսածը դործնականապէս ապացուցանելու և իր
ներողամիտ հօտին օրինակ հանդիսանալու նպատա-
կով, կ'ելլէ իր անդրանիկ պտուղը բարբառելով
կը ... ճաշակէ:

Այս մեղաւոր ճաշակումէն յետոյ այսօր ալ
Նիւ-Յօրքի բանտերուն համը կ'առնէ մեր («բարե-
պաշտ»), («սրբակրօն») և («աստուածահաճոյ») քա-
րօղիչը:

*
* *

Ընկեր Չալի Տիւտիւկճեան կ'ամուսնանայ Օր-
Ռօզա Ճերմակեանի հետ, որը աղջիկ եղած ատեն
երկու պէպէ՛ք թաղած էր արդէն:

«Ընկեր» Չալին, իր կնոջ անցեալին ծանօթ ըլ-
լալով հանդերձ, դրացուհին վիրաւորելու մտքով կը
հարցնէ .

—Օրիորդ, ձեր քոյրը ամուսնանալէ առաջ քա՞-
նի դաւակ ունեցաւ:

—Եթէ իմ քոյրը ամուսնանալէ առաջ երկու դա-
ւակ ունենար, հաւասար պիտի ըլլար քու կնոջ ա-
մուսնանալէ առաջ ունեցածին . — կը պատասխա-
նէ սրամիտ օրիորդը:

*
* *

Օրիորդ մը զինք սիրող երիտասարդին սիրոց
անկեղծութեան վրայ կասկածելով անձկանօք կը
հարցնէ անոր .

—Շիտակն ըսէ ձօրձ, անկեղծօրէն կը սիրե՞ս
զիս:

—Դեռ կը կասկածի՞ս . կը պատասխանէ խորա-
մանկ երիտասարդը:

*
* *

Երկու պղտիկներ կը խաղան փարքի մը մէջ:
—Հէ՛յ, գիտե՞ս, երեկ հայրիկս ինծի աղուօր
պուպրիկ մը բերաւ . ըսաւ Հրանոյշ իր խաղակցին:

—Ատկէ ի՞նչ կ'ելլէ . երեկ իմ մայրիկս ալ ինծի
նոր հայրիկ մը բերաւ . կ'աւելցնէ երկրորդը .

*
* *

Գողը տուն մը կը մտնէ և թանկարժէք գորգ մը
գողնալով հեռանալու պահուն տան տէրը ներս կը
մտնէ և անծանօթը տեսնելով կը հարցնէ .

—Ի՞նչ կ'ընես այստեղ:

—Ասիկա Գարեգին աղային տունը չէ՞ . կ'ըսէ:

—Չէ, ասիկա Կիրակոս աղային տունն է:

—Ա՛, ուրեմն ես սխալ տեղ բերած եմ գորգը-
ըսելով կը հեռանայ ճարպիկ սրիկան:

Երգիծարան մը մեծազարուստ վաճառականի
մը ծաղրանկարը կը շինէ աղուէսի մը մարմնով: Հա-
ջուստը չափազանց վիրաւորուած միտքը կը դնէ իր
վրէժը լուծել երգիծարանէն:

Կ'անցնին քանի մը օրեր: Երգիծարանը, որ պաշ-
տօնակիցը կըլլայ վաճառականին, պաշտօնական
գործով մը կը մտնէ անոր գրասենեակը և կը հար-
ցընէ:

—Վարչութիւնը ե՞րբ ժողովի պիտի հրաւիրէք:

Վաճառականը առանց անոր հարցման պատաս-
խանելու, վրիժառութեան յարմար առիթը գտած
համարելով, իր ծառայողներէն մէկուն կը պօռայ:

—Ա՛րտաշէս, խոզը գտա՞ր:

—Ա՛, ներողութիւն, սխալ տեղ եմ եկեր. վա-
ճառատուն կարծելով խոզանոցն եմ մտեր. ըսելով
կը հեռանայ երգիծարանը:

*
* *
* *

Գողին մէկը ժամացոյց մը դողնալու պահուն,
տէրը կը նկատէ և յանդիմանական ձեւով մը խօսքը
գողին ուղղելով:

—Ձե՞ս ամէնար որ դողութիւն կընես:

—Իսկ դուն չե՞ս ամէնար որ երեսիս կ'ուտաս.
Կը պատասխանէ սառնասիրտ գողը:

*
* *

Երիտասարդ տիկին մը, օտար քաղաքի մը մէջ
հանդիպելով իր դրացի պարոնին.

—Հըլօ Սըր, ի՞նչպէս էք:

—Շատ լաւ եմ, շնորհակալութիւն:

—Ի՞նչպէս է փոքրիկ Անահիտը:

—Շատ լաւ է:


—Ե՞րբ կը մեկիք տուն:

—Երկու օրէն:

—Իմ կողմէ համբոյր մը տուէք իրեն կարծիք
այտերուն:

—Տուէք այդ համբոյրը ինձ՝ տիկին, որ յանձ-
նեմ պատկանելոյն. կը պատասխանէ դործնական ե-
րիտասարդը:





ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ԻՆՔՆ ԻՐ ՄԷՋ

ՆՄԱՆՈՂԱԲԱՐ

Թէ ես լինէի Հայոց վարչապետ
Նախարարներս վսեմ ու բանգէտ.
Մին Նորատունկեան, միւսն ալ Մալֆօմ
Ալ չէի դաւեր Հայաստանին գէր:

Անդրանիկ լինէր մեծ Սպարապետ
Պօնափարքեանն ալ քիկնապահ Ասպետ.
Զէր լիներ ոչ սով, ոչ մահ, կտորած,
Զէր գար մեր վրայ պատուհաս, աղէտ:

Բայց եթէ մի օր, մի ժամ, մի վարկեան
Հայոց աշխարհին լինէի իշխան.
Ի՞նչ սուր սլաֆներ պիտի ցոյց տայի
Մեր ոտխներուն այսօրուան, վաղուան...

ԶՂԶՈՒՄ

Տէ՛ր, ես քեզ մեղայ
Որ իշխան չեղայ.
Թէև հանապազ
անոր ցանկացայ:

Մեղա՛յ տէ՛ր, մեղայ
Քեզ հազար մեղայ,
Որ շուրջս այսօր
Գանգատ կը տեղայ:

Վարձկան լակոտներ,
Առի՞՛ֆ բաժին ձեր.
Դէ՛հ գացէ՛՛ք, կորէ՛՛ք
Ինձմէ հեռուներ:

Հայաստան անգին
Կ'ապրի բարգաւան,
Առանց մեր բազկին
Առանց մեր խելիին:

Չտեսնեմ ալ ձեր
Թուևոտ երեսներ.
Շողումոզ, քծնող
Ստոբ լախէնե'ր:

Ափսոս ջանքերու
Ծախսած փողերու.
Որ եւ ձեզ տուի
Ի գին յոյսերու:

Մեղայ տէր, մեղայ
Քեզ հազար մեղայ.
Այսօր ալ, վաղն ալ
Յաւիտեան մեղայ...:



ԱՄԱՆՈՐԻ ՆՈՒԷՐՆԵՐ

Տոհմային սովորութիւն մը կայ անյիշատակ
Ժամանակներէ ի վեր, որուն համաձայն նահապետը
կամ տանուտէրը Ամանորին շուրջը հաւաքած իր սի-
րելիները, զանոնք կը կազանդէ զանազան նուէրնե-
րով:

Մելիք-Շահն ալ, հաւատարիմ աւանդապահը
իր ցեղային սովորութիւններուն, 1921 տարուան Ա-
մանորին կը կազանդէ մեծ ու պզտիկ՝ ըլլան
եպիսկոպոս կամ վարդապետ, տէրտէր կամ պատ-
ուելի, քաղաքագէտ թէ բժիշկ, իրաւագէտ թէ վա-
ճառահան, հասարակական գործիչ կամ խմբագիր:

Արդ, անոնք, որոնք իրենց ստացած նուէր-
ներէն զժգոհ կը մնան, արժան կամ անարժան կը
գանեն զանոնք իրենց տիտղոսին, դիրքին կամ աբ-
ժէքին, կը բարկանան կամ կը նեղանան, այդպիսի-
ներուն կը յանձնարարեմ ա) անկողիննին առան-
ձին ձգել, բ) մէկէն մինչև տասը համբել, գ) սիկա-
րէթ մը ծխել. ու եթէ ասոնք չօգնեցին իրենց յու-
զումը զսպելու, կրնան պաղ ջրով լողանք մ'առնել:
Սկսինք ուրեմն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ — Երկար կեանք:
ՀԱՅԿԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ — Անպարտելի բազուկ:
ՅՈՎՀ. ՔԱՉԱԶՆՈՒՆԻՆ — Չոյք մը նոր կորիւն-
ներ՝ Լոսանջի պաշտպանութեան համար:
ՏՕՔ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻՆ — Ամերիկահայ ապս-
տամբները զսպելու հնարամտութիւն և ազա-
րակ մը վերաշինուած Հայաստանի մէջ:
ՉՕՐ. ԲԱԳԲԱՏՈՒՆԻՆ — Մարակ մը:
ՉՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻՆ — Հայելի մը՝ իր անցեալը դի-
տելու համար:
ՍՎԱԶԼԻԻՆ — 250 տօլարի ամսական մը՝ ուրկէ կու-
գայ թող գայ:
ՓՐՕՖ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ — Սաղմոս մը և համրիչ
մը:
ԳԱՐՏԱՇԵԱՆԻՆ — Սվազլիէն յարգանքի հեռագիր
մը:
ՏՕՔ. ԱՐԳԱՐԵԱՆԻՆ — Քուէ, քուէ, քուէ:
ՏՕՔ. Փ. ԱԴԱՄԵԱՆԻՆ — Ապահովութեան զրահ
մը՝ ընդդէմ հովերու:
ԱՐՇԱԿ ՄԱՀՏԵԱՆԻՆ — Անսկզբունք ամբօխի մը
նախագահութիւն:
ՉԱՏԻԿ ՄԱԹԻԿԵԱՆԻՆ — Չրի թուղթ, առատ սի-
կար, հակիրճ նօթեր:
Մ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆԻՆ — Սահմանադիր ժողո-
վի պատուիրակութիւն:
ՇԱՀԱՆ ՆԱՐԱԼԻՆ — «Քեզի» էն վերջ «Ինծի»:
ՄՆԱՐԻՆ — 6000նոց բազմութեան մը 6 ժամ խօսե-
լու մենաջնորհ:

ՏԷՍՏԻԿԻԻԻՆ — Խմբագրաժառանգ մը:
ՍՍՍՏՈՒՐԻՆ — Դաշնակցափօյ դեղին մամուլին
դէմ համբերատար ողի:
ԽՈՐԷՆ ԳԱՂՈՒՍՏԵԱՆԻՆ — Անդրմակ սիրուհի մը:
ՍԱՀԱԿ ՉՉԵԱՆԻՆ — Հայկական Բարձրավանդա-
կի շրջուն գործիչ:
ԱՐՓԱՔՍՍԴ ՍԵԴՐԱԿԵԱՆԻՆ — Ֆրէզնօի հայկա-
կան գործակալութենէ հիւպատոսութիւն:
ԳԱՊՏԱՅԵԱՆԻՆ — 1921-ին 40 էքրնոց 5 այգիի
վաճառում:
ԱՐՄԷՆ ՊԱՐՏԻՉԵԱՆԻՆ — Նոր Օլսքանա մը «Աղ-
գային» խիօթները շրջափակելու համար:
Ա. ԹՅԷՆԿՃԵԱՆԻՆ — Հաշտութեան դաշնադիր մը՝
վերականգնել խմբագիրներուն հետ:
ՉԱՐՇԱՅԵԱՆԻՆ — Քիչ մը խաղաղութիւն և մըտ-
քի ամփոփում:
ՓՕԼ ՄՈՎԱԷՍԵԱՆԻՆ — Ամերիկայի նուիրատունե-
րու առաջնութիւնը:
ՀՐԱՉ ԵՐՈՒԱՆԴԻՆ — Շանձան դիմակ մը:
ԵՐ. ՄԵՍԻԱՆԻՆ — Հաւասարակշիռ միտք:
ԼԵՒՈՆ ԼԻԻԼԷՃԵԱՆԻՆ — Հայերէն Քերական մը:
ՍԱՊԱՀԻԻԼԵԱՆԻՆ — Տողրակ մը Փրագ:
ԱՂԱՍԻՆ — Կիլիկիան թագաւորութիւն՝ 10,000
տօլար թոշակով:
ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ — Սիսի կաթողիկոսութիւ-
նը... ի վերին Երուսաղէմ՝ վ ի ա Բալիֆօր-
նիոյ առաջնորդութիւն:
ՄԱՐԴՈՒԿԷՍԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ — Իր կուսակցու-
թեան լուծումը՝ չորրորդ անգամի արտաքսու-
մէն զերծ մնալու համար:

ՍՍՀԱԿ ՎՐԴ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆԻՆ — Ամերիկայի ազգային սահմանադրութեան մէջ նոր յօդուած մը որով Բարդէն Սրբազան լալու իրաւունք չունենայ :

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆԻՆ — Հայրապետական կոնդակ մը՝ Հանրապետութեան անունը պատարագի ատեն յիշատակելու համար :

ՏԷՐ ԴԷՆՈՒՈՐՈՍ ՔՀՆ.ԻՆ — Յրէզնոյի առաջնորդական ցուպը :

ՊԱՏ. ԽԱԶՕԵԱՆԻՆ — Ղազեբու երամակ մը՝ Ֆէրասեանի ընկերվարական միջնաբերդը գրաւելու համար :

ՅԷՐԱՀԵԱՆԻՆ — Միջնաբերդի ուժեղ պաշտպանութիւնը :

ՊԱՏՈՒԵԼԻ ՍԱՆԴԻԿԵԱՆԻՆ — Դէպի Սթաքթըն ճամբորդութիւն մը :

ՊԱՏ. ՓԱՓԱԶԵԱՆԻՆ — Իր «ցնորք» կարծած Հայաստանին անկախ և բարդաւաճ ուրուականը :

«ԶԱՆԱՍԷՐ»ԻՆ — Զանաւիրութիւն Հայաստանի հանդէպ :

«ՓՐՕՅ.» ՄԻՆԱՍԵԱՆԻՆ — Անրուժեղի ալքալա :

ՓՐՕՅՅ-ԳԱԼՅԱՆԻՆ — «Ճամբայ բացէք»ներու շարք մը՝ իր կազմած երաժշտական խմբերը?? առաջնորդելու համար :

ՇԻՐՎԱՆԶԱԴԷՆ — «Անբարոյիկ» տաճկահայերէն իր գրական գործունէութեան գնահատական ծաղկեփունջ մը :

«ԱԶԳ»Ի ՆԱԶԱՐԻՆ — Թշնամի պետութեան մը ինքիլէնէնս պիւոօի մը անդամակցութիւն :

ԾԱՂԻԿԻՆ ՍՈՒԿԱԿ ՄԸ :

ԿԻԻԼՕԻՆ — 2000 նոր բաժանորդներ իր «Յախաւելին» :


ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ — Բարեհամբոյր մեկենաս մը՝ իր ձեռագիրները հրատարակելու համար :

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ» — Երուսաղէմեան պատանք մը :

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐՈՒՆ — Սնտուկ մը փառալըր, տուփ մը ներկ, մէյ մէկ օտար քալալէր :

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ — Սրճարան մը՝ ուր ճաշեն, խումար խաղան, պարեն քնանան : Եւ բացի սխալումէ և մոռացմունքէ :





ՏՕԳԹ՝ Գ Ա Ր Ե Գ Ի Ն Փ Ա Ս Տ Ր Մ Ա Ճ Ե Ա Ն

Ինչպէս կը կենայ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԴՈՅ ԴԷՄ

ԹԷ ԻՆՉՈՒ ՇԱՀ ԵՂԱՅ

Ընկերարաններէն ոմանք այն կարծիքէն են թէ Գասաներորդ դարը բացարձակապէս գիտական դար է: Աձեն երեւոյթ պիտի բացատրուի գիտական ցուցմունքներու համաձայն, պատճառի և արդիւնքի ըսկզբունքով, իրերու փոխ-յարաբերական վիճակի առնչականութեամբ և բնական ճանապարհով: Այս կերպ մտածող փիլիսոփաները կը ժխտեն բոլոր գերբնական գորութիւնները և հրաշքի գոյութիւնը:

Ուրիշները սակայն հակառակը կը հաստատեն: Կը պնդեն որ գեռ ի գորու է աստուածային այն ուժը, կամքը՝ որով կը կառավարուէր ու պիտի կառավարուի կեանքը՝ մինչև ի կատարած աշխարհի: «Շղիցի լոյս և եղև լոյս» ը յաւիտենական թաւալումով մը միշտ գոյութիւն պիտի ունենայ և հետեւաբար աշխարհի մէջ միշտ հրաշքներ կամ արտակարգ երեւոյթներ պիտի պատահին: Ինչպէս անցեալին մէջ Սողոս մը Պողոս եղաւ Քրիստոսի գաղափարականը զգենալով, Դաւիթ մը մարգարէացաւ իր երիտասարդական օլուր օլմազ մեղքերը սրտագինս զղջալով: Ղազարոս յարութիւն առաւ և մեռելները ողջնցան: Կոյրերը սկսան տեսնել և Բաաղամի էլը խօսեցաւ: Այսպէս հետեւաբար, ներկայիս և ապագային նման իրականութիւններ պիտի կրնան տեղի ունենալ:

Այս տեսարաններու տեսակէտները անշուշտ հիմնուած են իրենց ըսածը փաստող որոշ տուեալներու վրայ :

Նորագոյն մտածողութեան հետեւող մը ըլլալով հանդերձ, մարդ պարտաւորուած կ'զգայ երբեմն հաւատալու նաև երկրորդ տեսակէտին. որովհետև մարդ աչքովը կը տեսնէ և ականջովը կը լսէ այնպիսի իրողութիւններ՝ որոնք հրաշքի պէս բաներ մ'են : Կ'ուզէ՞ք օրինակներով խօսիմ :

Լսեցէ՛ք :

Հայաստանի մոխիրներէն յարութիւն առնելը հրաշքի պէս բան մըն է : Փալքօսըզ, սօփանի Դաշնակցականներուն կառավարութիւն կազմելն .և նախարար, վարչապետ ըլլալը երեւակայելն իսկ յիմարութեան պէս բան մըն էր նախապատերազմական օրերուն : Թուրք մօլլա մը հայացաւ և Անգլիանիկի նման «աւազակները» սրբացան պատուելիներու բերնին մէջ :

Տօքթ. Պօնափարթեանը զինուորական «քէփթըն» եղաւ Ամերիկայի մէջ : Ենթադնդապետ Թորգոմը «Զօրավարութեան» աստիճան ստացաւ անշուշտ Պօսիդոնէն :

Նեւտոն խանը 20,000 նոց ոռոտական բանակի մը հրամանատար հռչակած է ինքզինքը :

Մ. Մինասեանը առաւօտ մը արթնցաւ որ դիպուածով «փրօֆէսէօն է եղեր պատուելի Անանիկեանի նման :

Վանի մէջ Ռչտունին համեստ ուսուցիչ մըն էր : Եանքիներու այս աշխարհը ոտք կոխած օրը հոգին սրբով զօրացաւ, իմաստութիւն զգեցաւ և «ԿՈԶՆԱԿ»

ի կողմէն «փրօֆէսէօն» հռչակուեցաւ : Բայց ինչ ինչ պատճառներով Ֆրէզնօ եկաւ և . . . մտաւ Գատուելիական համեստ կեղևին մէջ :

Խաչատուր Պուճիքանեանը — ընթացաւարտ Եփրատ քօլէճէն — ժառանգաբար «փրօֆէսէօն կը կոչուի Ռամկավարական մամուլին մէջ : Պ. Խաչատուրը ժառանգած է իր ողբացեալ եղբօր՝ Յովհաննէս Պուճիքանեանի տիտղոսը :

Վահան Մօրլեանը Սօցեալ Դէմօկրատ Պրօլետարականական աշխարհի մէջ, կ'աշխատի յանուն ըսկզբունքի համայնացնել ակադեմական բոլոր տիտղոսները : Ինք արդէն գրաւած է Տօքթօրութեան տիտղոսը :

Օր մը թոռուցիկ-Կոչի մը մէջ կ'արդացի, որ մեր սուսիկ-փուսիկ Վահագնը Ամերիկայի մէջ «քէփթըն»ութեան աստիճան է ստացեր : (որքան ալ քէփթըն և փրօֆէսէօն կը բուսնի սա՛ Ամերիկային մէջ) :

Ասոնք, սիրելի ընթերցող, դեռ իմ գիտցածներս են. հապա եթէ թու գիտցածներդ ալ գիտնայի . . . : Բայց եթէ համբերութիւն ունիս էլի լսելու, մտիւք ըրէ՛ :

Ֆրէզնօի մէջ Ծաղիկը ինքզինքը ֆիլիսոփայ յայտարարեց և «Յախաւել»ի Կիւլօն ալ՝ Կոմս :

Եւ դեռ այսպէս քանիներ կան, որոնք այս ըստ պէիս սոսկալի երկունք կը քաշեն նոր յորջորջումով Անժ մարդ դառնալու, ոմանք կը յղանան. (առանց հաշուելու վիժածները) :

Այս բոլորը տեսայ և կ'արդացի, կ'արդացի և լսեցի և որոշեցի դառնալ ՇԱՀ:

Ահա այդ օրէն, համեստ Մելիքին Շահ մ'ալ կը ցեցի և եղայ Մելիք—Շահ: Կարծեմ որ ալ իրաւունք ունիմ այդ անունով մե'ծ մարդ դառնալու և դուք պարտականութիւն՝ ինձ լսելու:

Պահ մը այնպէս կարծեցի թէ մեր այս մակդիրներու կցումը անմեղ դրօսանքի պէս բան մըն է և բոլորովին անհետեւանք պիտի մնայ: Բայց իմ այս՝ լուսատեսութեանս մէջ չարաչար սխալուած եմեղեր որովհետեւ անցեալները խիստ ուշադրաւ ժողով մը տեղի կ'ունենար: Գիտնականներու կաճառը լուրջ ուշադրութեան առած էր սոյն երեւոյթը և մանրակրկիտ քննութեան ենթարկած էր դայն:

Գիտնականները խնդիրը իր Փիղիքական, ընկերային, բարոյական և մտային կողմերով քննելէ և ուսումնասիրելէ յետոյ զտան նորելուկ բակտերիաներ, որոնք մասնաշատուկ հիւանդութիւն մը կը յատկանշեն:

Ախտաբանական այս հետախուզութիւնը շարունակելով դիտական աղաղեմիան հասաւ այն եզրկացութեան, որ այդ բակտերիաները առաւելաւ՝ Ամերիկայի հայ մտաւորականներու մէջ կը ծնի, կ'աճի և կ'ուժանայ:

Այդ բակտերիաներէն —ինչպէս տեսանք— այստեղ բաւական վարակուածներ կան և եթէ առաջը չառնուի հիւանդութեան, կը թուի թէ մեծ համեմատութիւններ պիտի առնէ:

Դարմանելու պահուն պէտք է սա իրողութիւնը աչքի առաջ ունենալ, որ մինչդեռ սովորական հիւանդութիւնները կուգան մեր վրայ հակառակ մեր կամքին, այս նորելուկ հիւանդութիւնը՝ համաձայն մեր կամքին:

Եւ կը հաւատտեն որ հիւանդութիւնը ազնուապետական ծագում ունի. ասոր համար մեր պրօլէտար ինտէլիկէնցիան սիրով կը հիւրնկալէ այդ հիւանդութիւնը և խանդաղատանքով կը զուրգուրայ անոր վրայ:

Իժշկական դիտութիւնը կ'ըսէ թէ «հիւանդութիւնը ճանչնալ հիւանդը դարմանուած ըսել է»:

Այժմ երբ հիւանդութիւնը ճանչցուած է, դարմանումը պէտք է սկսիլ քանի ուշ չէ:

Կ'առաջարկէի աղուոր մը հականեխել մեր ուղեղները և նորէն նոր մկրտութիւն մը կատարել:



ՀԱՅ ՄԵԾԱՏԱՆ ԻՂՁԸ


Ի խորոց սրտի խօսք տո Հայաստան

Որքա՛ն կ'ուզեմ քան Հայաստան
Որ դու լինիս ազատուած,
Ու ես լինիմ փարքամ իշխան՝
Թէկուզ կոպէկ չտուած :

Քո կոյսերը բազմահագար
Արիւն, արցունք բափեյիւն .
Մեղինն, Գասպար և Պաղտասար՝
Իրենց կեանքը գահեցին :

Բայց ես տունը միլիոն դարսած
Գիւնուով խորտիկ կ'ուտէի .
Աղուոր կնկան, կողքիս բազմած,
Վարդ-շրթներէն պաչէի :

Ա՛յս Հայաստան, քան Հայաստան,
Ե՞րբ կը լինիս ազատուած .
Որ ես լինիմ հաուստ իշխան՝
Թէև երիցս ուրացած . . . :



ՀԱՅ ՄԵԾԱՏԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ
ՃԱՇԷՆ ՅԵՏՈՅ

— Հարուստը ինչու՞ չի կրնար մտնել երկնքի
արքայութիւնը :

— Որովհետեւ խեղճի արցունք, ուրբի զրտինք,
Թշուառի արիւն կայ իր հարստութեան մէջ :

Ը Ն Կ Ե Ր Ա — Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն
Բ Ա Ր Ո Յ Ա — Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Չ Ա Կ Ա Ն
Ս Ի Ր Ա Յ Ի Ն — Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն

Ձ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք Ն Ե Ր

— Պրն. բժիշկ, ամուսինս շատ յիմար մէկն է :
— Չըսե՞ս որ ամենաերջանիկ մարդն է :

* * *

Ուսուցիչը կը հարցնէ աշակերտին .
— Ո՞վ ստեղծեց երկինքն ու երկիրը Արշակ :
— Աստուած :
— Իսկ Աստուած :
— Մենք. կը պատասխանէ աշակերտը :

* * *

— Ի՞նչ տարբերութիւն կայ հոգեւոր և մարմը-
նաւոր հովիւներուն մէջ :
— Սա՛ տարբերութիւնը, որ մինչ մարմնաւոր
հովիւը կշտացնելով կը կթէ իր հօտը, հոգեւորը
խոստանալով... երկնքի արքայութիւնը :

* * *

— Ի՞նչ տարբերութիւն կայ հայ խմբագրին եւ
հայ դերասանին մէջ :
— Ճիշդ է որ երկուսն ալ անօթի կը մեռցնենք .
խմբագիրը դրելով հոգին կ'աւանդէ, իսկ դերասանը
խօսելով :

* * *

— Ի՞նչ տարբերութիւն կայ Հ. Յ. Դաշակցու-
թեան և Ռամկավար կուսակցութեան մէջ :

— Խօսքի և դործի տարբերութիւնը :

* * *

— Ի՞նչ տարբերութիւն կայ Սօցեալ Դէմօկրատ
Հնչակեաններու և Յոյն մեծխօսիկներուն մէջ :

— Պօռոտախօսութեան մէջ երկուսն ալ իրարու
գլուխ կը լուան :

* * *

— Հիմնական ծրագրային տարբերութիւն մը
կը գտնե՞ս Ազգային Ռամկավարներու, Վերակազ-
մեալ Հնչակեաններու և Հայ Ժողովրդական կու-
սակցութեան մէջ :

— Տարբերութիւն մը չեմ տեսներ :

— Հասկա ի՞նչու բաժնուած կը մնան :

— Հայաստանի Հանրապետութեան նախագահ
կան թեկնածութեան շուրջ համաձայնութիւն չեն
կրնար կայացնել :

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ջ Ո Ւ Ն

ՀԱՅԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՕՍԻՆ ԿՈՎԿԱՍՄԻ ՄԷՋ

Գաղթական մը որ նոր եկած էր Թիֆլիզ և բառ մ'անգամ Ռուսերէն չէր գիտեր, շարաթուան մը վարժութենէ վերջ հազիւ դոց սովորած էր «պա Րուսքի նէ զնայու» (Ռուսերէն չեմ գիտեր) խօսքը, իր անցագիրը թաղամասի ոստիկանութեան մօտ արձանագրել տալու համար կը մօտենայ իր տեղացի նոր ծանօթներէն մէկուն և անոր բարոյական օժանդակութիւնը կը խնդրէ :

— Անցագիրս արձանագրել պիտի տամ, կրնա՞յի՞ք ինձ հետ մինչև ոստիկանատուն գալ :

— Ցաւում եմ որ չեմ կարող գալ, գանիք եմ, բայց կարող եմ ձեզ հետեւեալ թելադրանքն անել :

— Բայց ես Ռուսերէն չեմ գիտեր :

— Նիչէվօ : Գնում ես ուշանկէն, տրվերը սքուշաք կանես, տվորնիկը կը գայ, ըսքրասիք կանես, փասփօրքդ կը տաս, նրանք գաեվիք կանեն կը տան :

Գաղթականը, որ «գնու մ ես, կանես, կը տան» էն զատ ուրիշ բան մը չէր հասկցած այդ խօսքերէն, ապուշ ապուշ մարդուն երեսը նայելէն յետոյ .

— Ներողութիւն, եղբայր, ես բան մը չհասկցայ :

— Տօ ո՞նց հայ ես որ չես հասկանում, հայի՞րէն եմ խօսում էլի . . . :

ՀԱՅԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՕՍԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Երկրէն Ամերիկա հասնող հայ մը սրճարանի մը մէջ կը ծանօթանայ երեք տարի առաջ Ամերիկա եկողի մը հետ՝ որուն հետ հետեւեալ խօսակցութիւնը կ'ունենայ :

— Հըյօ, հայրենակից, ուրախ եմ ծանօթանալուս հառաք ետ :

— Ծնորհակալ եմ. կը պատասխանէ նորեկը, «հառաք ետ» ին վրայ մտմտալով :

— Ի՞նչպէս կը սիրես Ամերիկան :

— Ինչպէս թէ «ինչպէս կը սիրեմ», ինչպէս կը գտնե՞մ ըսել կ'ուզէք :

— Եէս սրբ :

— Եէսսիրը ո՞վ է :

— Ուէլ, «այո» ըսել ուզեցի :

— Կրնա՞ք ինձ գործ մը գտնել :

— Այ տօնք նօ : Ես այսօր քու պիզի եմ : Լաւ միտքս ինկաւ . շանը շատ պօսեր կը ճանչնայ, կըրնայ քեզի հէլի ընել, իրեն քըրբալ մը չէ ատիկա : Քեզի համար կամ ուրբ մը կը գտնէ կամ իր փէֆինկ հաուզին մէջ լէյպրուքեան չէնս մը կուտայ . ժամանակ մը կ'աշխատիս այնտեղ և պայ էնտ պայ փիս ուրբ մը ձեռք կ'անցնես . թէ դրամ կը չինես, թէ անգլերէն կը սովորիս և յետոյ լաւ պիզիներս մը կ'ունենաս . օլ բայք է :

Նորեկը երբ անշուշտ կը հեռանար իր նոր բարեկամի մօտէն, այս վերջինը այդ օտարոտի և անպատշաճ ընթացքին վրայ զարմացած և քիչ մըն ալ վիրաւորուած կը հարցնէ.

—Ու՞ր կ'երթաս հայրենակից, առանց կուտպայի:

—Սօսածներդ հասկնալու համար երթամ թարգման մը բերեմ. կը պատասխանէ նորեկը:

—տիէք սօ օլ րայք:

ՀԱՅԵՐՆ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՕՍԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՄԷՁ

—Քա մայրի՛կ, Յակօբիկը տեսա՞ր, խըլյախ տէլիդանլի մըն է Եղեր, գարա գաշ, գարա կէօզ:

—հա Եավրուս, տեսայ. Եախըշուխի բան է, ափէրին Յակօբիկ: Քա ինտօ՞ր կ'ըլլայ կոր քի հօս եկեր է:

—Կ'ըսեն կոր քի թաղականական ընտրութիւն կայ: անոր համար եկեր է:

* * *

—Ծօ Արշակ, ժամա կիտէլի՞մ մի:

—Նէ՞ վար ծօ':

—Թաղականական ընտրութիւն վար տըր:

—Վագ կէլ պէ':



Յ Ա Ր Գ Ա Ն Ք Ի

ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ *

Ժամանակէ մը ի վեր, առտուան թերթ մը, ճանարկած է, ամէն կիրակի, մեռած ծանօթ մտաւորականները, նահատակ կամ ոչ, անգամ մըն ալ մեռցնելու, անոնց յիշատակին յարգանք մատուցանելու պատրուակին ներքե: Այսպէս հետզհետէ, տափակութեան, տղիտութեան, անճաշակութեան և տխմարութեան բաղինին վրայ զհօսեցան Ալիշան, Երուանդ Սրմաքէշխանիան, Տիրան Քէլէկեան, Թլիկատինցի և Արտաշէս Յարութիւնեան: Յարգանքի այս չարաչուք և նորանշան արտայայտութիւնը կը շարունակուի:

Երէկ ներկայ գտնուեցայ նոր ողջակէզի մը պատրաստութեան: Երեք չորս զրոգէտ խմբազիր-

Ծանօթ.— Կ'արտատպենք համբաւաւոր երգիծարան Երուանդ Օտեանի սոյն կտորը որ հայելի մը պէս հարազատօրէն կը պատկերացնէ մեր Ամերիկահայ կուսակցական մամուլը՝ ուր յաճախ իրական արժանիքը կը խաշուի, անարժանը կը զբուռառուի, իրերը կը չըջուին և քինախնդրութիւնը տիրական կերպով կ'իշխէ մարդոց հոգեբանութեան վրայ:

ներ?? Ժողովուած էին իրենց զոհը որոշելու համար, թերթին խմբագրատան մէջ:

Թուղթ, գրիչ, մելան, մատիտ, ամէն բան պատրաստ էր: Մտիկ ընենք խմբագիրներուն խօսակցութիւնը:

Ա. ԽՄԲԱԳԻՐ— Վաղը որո՞ւ վրայ պիտի գրենք:

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Սիամանթօյին վրայ գրե՞նք:

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Եկէ՛ք Սեւակին նուիրենք վաղուան թիւը:

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Ձէ, աւելի հին մէկը գտնենք... օրինակի համար Խորէն Նարպէյը:

Ա. ԽՄԲԱԳԻՐ— Կարծեմ պատմագէտ էր:

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Ձեմ գիտեր, միայն անունը լրած եմ:

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Եթէ չեմ սխալիր վիպասան էր:

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Մե՛ղք, Արեկը հոս ըլլար նէ՛ անոր կը հարցնէինք, ան գիտէ հարկաւ:

Ա. ԽՄԲԱԳԻՐ— Այլօյաճեանն ալ գիտնալու է. Խորէն Նարպէյը կարծեմ նշանաւոր մանկավարժ մը եղած է:

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Ինչ կ'ուզէ թող ըլլայ. աղբար, ինչո՞ւ երկար կ'ընէք... վաղուան թիւը Նարպէյըն պիտի նուիրենք. որոշուեցա՞ւ:

ԵՐԵՔԸ ՄԻԱՍԻՆ— Այո՛, այո՛...

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Ուրեմն անէք թուղթ ու գրիչ և սկսեցէք գրել... հիմա գրաչարները ձեռագիր կ'ուզեն. չէ՞ք գիտեր որ նախ առաջին երեսը կը շարուի:

Ա. ԽՄԲԱԳԻՐ (մարանոտ) — Բայց եթէ մեր ընկերները գիտողութիւն ընե՞ն... որովհետեւ խօսք մը անցաւ որ այս օրուան թիւը Գեղամ Բարսեղեան

նի յիշատակին պիտի նուիրէինք:

Դ. ԽՄԲԱԳԻՐ (արհամարրոտ ժպտով մը) — Ճանրմ, քօհաֆ խօսքեր կ'ընես, մէյ մը մենք գրելիքնիս գրենք լմննայ, եթէ դիտողութիւն ընեն նէ՛ Նարպէյին անունը կը վերցնենք, տեղը Գեղամ Բարսեղեանին անունը կը դնենք պրծաւ գնաց:

Ա. ԽՄԲԱԳԻՐ— Ես ատիկա չմտածեցի:

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Ան չէամա, ձեր մէջէն ո՞վ ուսումնասիրած է Խորէն Նարպէյի գործերը, քիչ մը տեղեկութիւն տուէք:

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Ծօ՛, ապուշ, գործերը կարդալէն ետքը պապա ալ Նարպէյին վրայ յօդուած կը գրէ, մարիֆէթը առանց կարդացած ըլլալու գրելուն մէջն է:

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Մեր ընկերը բրաւունք ունի:

(Խմբագիրները գրիչը ձեռք կ'առնեն և կը սկըսին գրել: Պահ մը խորին լռութիւն):

Ա. ԽՄԲԱԳԻՐ (Լռութիւնը խզելով) — Նարպէյին ոճը կու՞ն էր...

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Ես թոյլ սճ մը ունէք, գրեցի:

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Կուռ և միանգամայն թոյլ ըսէք ու մէջէն ելէք:

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Այս մարդը բանաստեղծութիւն գրած է:

Ա. ԽՄԲԱԳԻՐ— Ձեմ կարծեր:

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Ա՛խ, սա Արեկը մէյնը ձեռք անցունէինք...

Դ. ԽՄԲԱԳԻՐ— Ծօ՛, ի՞նչ ապուշ մարդիք էք, չէ՞ք գիտեր որ «Պլուզն Աւարայր»ին ինք գրած է:

Ա. ԽՄԲԱԳԻՐ— Հայկ դիւցազն ալ անոր չէ՞:

Դ. ԽՄԲԱԳԻՐ հեղինակաւոր շեշտով մը) — Ձէ,

անիկա Ալիշանինն է : Բայց հիմա թողէք այդ խնդիր
ները որու կ'ուզէ թող ըլլայ, մենք մեր գործին նա-
յինք : Ո՞վ պիտի հարուածենք Նար պէյը գործիքը Ը-
նելով, ան նայինք :

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Ես մէկ քանի հողիի հետ հա-
չիւ ունիմ, այս առթիւ հաչիւս պիտի կարգադրեմ :

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Ես աղուոր մը պիտի լուամ
«Ճակատամարտ»ի մէջ գրողները :

Դ. ԽՄԲԱԳԻՐ— «Վերջին Լուր»ին մարդիկն ալ
չմոռնանք :

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Ես սանկ բան մը գրեցի, տե-
սէք ինտոր է (կը կարգայ բարձրաձայն), «Սորէն
Նարպէյ բնաւ չէր նմաներ մեր այժմու գրողներուն,
որոնք իրենց մտային սնանկութիւնը դրամագլուխ
ըրած, յաչաղկոտ իմաստակութեան ամբարտակներ
կը բարձրաձենն՝ անապատային սրբապարտութեամբ
աւլցուն յօդուածակոյտերու տեղատարալի մը
մէջ...»: Ի՞նչ բռիք ասոր :

Ս. ԽՄԲԱԳԻՐ— Սքանչելի՛ր...

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Հոյակապ :

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Ես մասնաւորապէս ծանրացայ
Սորէն Նար պէյի բանաստեղծական հանճարին վրայ :

Բ. ԽՄԲԱԳԻՐ— Բայց վստա՞հ ես որ Նար Պէյ
բանաստեղծ էր :

Գ. ԽՄԲԱԳԻՐ— Կ'ուզէ ըլլայ կ'ուզէ չըլլայ : Իմ
մէքամս այս առթիւ մեր հիմակուան բանաստեղծ-
ներուն վրայ յարձակիչն է :

(Եւ չորս խմբագիրները կը շարունակեն գրել ի-
րենց «ուսումնասիրութիւն»ները) :

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

«Ճակատամարտ»

Յ Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Տ Ա Ր Ը

(Քըմիչընըր)

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ԿԱՏԱԿԱՆԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր

ՃԱՆ — Յանձնակատարը. ճարպիկ, արագաչարժ,

արագախօս մէկը : 30 տարեկան : Հարուստ է :

ՄԷՐԻ — Անոր կինը. նոյնպէս ճարտասան և պչրասէր
և 23 տարեկան :

ԱՆՆԱ — Տան աղախինը. 25-26 տարեկան գեղացի
կին մը :

ՏԻՐԱՆ — Ճանի մօտիկ բարեկամը. 45 ը անցուցած :
ԵՐԵՔ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐ

Անցքը կը կատարուի Ֆրէզնօյի մէջ

ՏԵՍԱՐԱՆԸ. — Մաքուր կահաւորուած սենեակ մը.
ձախ կողմի վրայ դաւնակ մը : Ճակատը դիւան մը,
վրան հայելի մը տեղաւորուած : Աքռոներ, քիկ-
նաքռա մը և կեդրոնի կլոր սեղան մը :

ՄԷՐԻ և ԱՆՆԱ

(Գաւեակիին առաջ նստած, նօթաները կը բեր-
թատէ, յետոյ դառնալով Աննային՝ որ սեղանները,
աքոսները կը սրբէ) Աղջի չըլլալիք, քեզի հազար
անգամ ըսեր եմ քի, սա՛ դաշնակը ծածկած պահէ:
Նորէն քու գիտցածդ կընես: (Մտորը քսելով դաւ-
նակիին և ցոյց տալով) Նայէ, փոշին նայէ՛: Ո՛ւհ,
մարդ ըլլալիք չունիս: Երկրէն ինտոր եկեր ես, ա-
նանկ ալ մնացեր ես: (Ոտքի ելնելով և ցուցամա-
տը ծռած Աննայի գլուխը մեղմօրէն ծծծելով) Մարդ
եղի՛ր, մարդ. Ամերիկա եկողը քիչ մը պիտի քաղա-
քակըթուի, հասկցա՞ր: (Կոտրտուելով կը նեմէ սեմ-
եակիին մէջ):

ԱՆՆԱ.— Էս քաղաքացի չեմ օ հասկնամ խանրմ,
գեղացի եմ, դպրոց չեմ գացեր: Ինչ գիտեմ դաշնա-
կը ի՞նչ է: (Շարունակելով սրբել աքոս-սեղանները)

ՄԷՐԻ.— Ամանները լուացի՞ր:
ԱՆՆԱ.— Լուացի, մաքրեցի խանրմ:
ՄԷՐԻ.— Սրբեցի՞ր, ծածկեցի՞ր:
ԱՆՆԱ.— Հա, խանրմ:

ՄԷՐԻ.— (Դիտելով խոհանոցը) Գետին անցիս
հա՛ աղջի, որքան զժուար է քեզի խօսք հասկցնելը:
ԱՆՆԱ.— (Շփոթուելով) Ի՞նչ կայ որ, խա-
նրմ:

ՄԷՐԻ.— Ի՞նչ պիտի ըլլայ, պտուղները ինչո՞ւ

բաց թողեր ես:
ԱՆՆԱ.— Ի՞նչ կըլլայ որ խանրմ:
ԱՆՆԱ.— Էլլիչիդ քէօրը կըլլայ, օդ կ'իջնայ վը-
բան տէ բոյզըն կըլլայ:
ԱՆՆԱ.— Բօյզընը ի՞նչ է:
ՄԷՐԻ.— Միջրոպ, թոյն, կը հասկնա՞ս:
ԱՆՆԱ.— Տարուան մը տըհա եղայ:
ՄԷՐԻ.— Հայտէ, երկայն մ'ըներ: Գնա՛ սեղանը
պատրաստէ՛: Հիմա էմման տուն կուգայ սքուլէն:
Ճանն ալ ուր է ուր չէ ճաշի կուգայ: Յետոյ մու-
վինկ փիիքչեր պիտի երթանք:
ԱՆՆԱ.— Օ բայթ (կերթայ և իսկոյն վերա-
դառնալով) միսը տապկեմ քի խորուեմ:
ՄԷՐԻ.— Ի՞նչ կընես ըրէ, միայն չուտ ըրէ:
ԱՆՆԱ.— Լաւ, լաւ:

ՏԵՍԻԼ 2
ՄԷՐԻ յետոյ ձԱՆ

ՄԷՐԻ.— (Ինքզինքը հայելիին մէջ կը նայի ծը-
նելով, ծռուկելով. Երբեմն կը նեղանայ, մերթ կը
ժպտի ինքնաբաւական՝ իր սիրունութեան վրայ հի-
ացած. յետոյ տխրելով) Գետինը մտնայ ասանկ
հայելին. հիչ լաւ ցոյց չի տար. դեղնա՛ծ, նիհա՛ր:
Միթէ՞ ես ասանկ եմ:

ՁԱՆ.— (Ոտք նոյն միջոցին ներս կը մտնէ) Ա-
մենեւին ատանկ չես նա՛ղելիս: Գեղեցիկ, սիրուն,
աղուոր, գրաւիչ, (քեւերը քանալով կը յարձակի
վրան և կը համբուրէ) 2000 տողար Մէրի, 2000 տո-
լոր, կը հասկնա՞ս: Այսօր, հիմա, 2000 տողար եմ
չիներ: (Ձեռքերը ցփելով, ուրախ ուրախ կը պտտի
սեմեակիին մէջ)

ՄԷՐԻ.— Իրաւ՞:

ՃԱՆ .—Այո, այո, 2000 տօլար: Այսօր չարաթ մըն է աւանակին մէկին ետեւէն էի ինկեր, 40 էյքըր պիտի առնէր. քանի մը աճէնթներ թիթեռնիկի պէս շուրջը կը դառնային. բայց վերջապէս ես հոգուն քաշեցի: Կէսը ալքալա էր, ալքալա՛: Կը հասկնա՞ս: Քօնթրաքթը շինեցինք պրծանք: 2000-նոց չէքը ըստացայ: (Ուրախութեամբ կը ցատկարտէ սենեակին չորս կողմը և չէքը հանելով գրպանէն կը դնէ սեղանին վրայ՝ ամուր մը խփելով) նա՛հ:

Մէրի .—(Ուրախ է վերին աստիճանի. կը վազէ չէքը կը վերցնէ, կը նայի և կը գրկէ իր ամուսինը՝ որ նոյնպէս կը փաթթուի կնոջը) Կեցցե՛ս ձան, քեզի պէս ճարպիկ, աչքբաց, խելացի աճէնթ մը չկայ:

ՃԱՆ .—Քեզի պէս սիրուն, գեղեցիկ, շնորհալի կնիկ մը չկայ:

Մէրի .—(Յանկարծ տխրելով) ձա՛ն:

ՃԱՆ .—Ի՞նչ է հոգիս:

Մէրի .—Մեծ, լաւ լուքինկ կլէս մը կուզեմ:

ՃԱՆ .—(Յոյց տալով հայելին) Ասոր ի՞նչ է եզեր որ:

Մէրի .—Անիկա լաւ ցոյց չտար: Այնպէս նիհա՛ր, դեղնա՛ծ (լալ կեղծելով) մի՞թէ ես ատանկ եմ:

ՃԱՆ .—Ամենեւին ատանկ չես:

Մէրի .—Յետոյ ամբողջ հասակովս կուզեմ տեսնուիլ:

ՃԱՆ .—Ես քու հասակին մատաղ. (գուսաներգով)

Սեւ աչքերդ խոշոր, յօնքերդ կամար,
Քեզ բերող մայրը թող ապրի հազար.
Վարդ ես, ալ չկայ հատ մ'ալ քեզի պէս
Խենթի պէս սիրահար սոխակ մըն ալ ես:

Տէ, եկուր պաղտուինք: (կը մօտենայ համբուրելու)

Մէրի .—(Նազ ընելով կը հեռանայ ժպտուն)

ՃԱՆ .—Չե՞ս ուզեր. լաւ, ես ալ կ'երթամ: (կուզէ հեռանալ):

Նեղացա՞ր, տէ լաւ:

ՃԱՆ .—(կը մօտենայ համբուրելու):

Մէրի .—ձա՛ն:

ՃԱՆ .—Ի՞նչ է հոգիս:

Մէրի .—Հայելին:

ՃԱՆ .—(Համբուրելով) Օլ ըայթ: Եթէ երիտասարդները դիտնային որ համբոյրը այսքան թանկ կը ծախուի, երբէք չպիտի ուզէին ամուսնանալ:

Մէրի .—Դժգո՞հ ես ամուսնանալէդ:

ՃԱՆ .—Օ՛ր ո՛չ, ո՛չ: Ա՛խ կիներ, կիներ, առանց նազի բան մը չպիտի տաք էրիկ մարդոց: Ինչո՞ւ:

Մէրի .—Ատիկա կանանց գաղտնիքն է, որ պիտի մնայ անլուծելի գաղտնիք:

Տ Ե Ս Ի Լ 3

ՆՈՅՆՔ և ՏԻՐԱՆ

ՏԻՐԱՆ .—Բարեւ: (Մերիին գլուխ տալով) Հասո՞ւ տու եու տու:

Մէրի .—Վէրի ուէլ, թհէնք եու:

ՏԻՐԱՆ .—Այդ ես կը տեսնեմ : Դուն ալ , ձանն ալ վերին աստիճանի ուրախ էք : (Ճանին) նորէն որս մը զարկած ես :

ՃԱՆ .— Ինչպէս ալ կը հասկնաս , սքանչելի չէնո՞ ՏԻՐԱՆ .—Ի՞նչ չէնո՞ :

ՃԱՆ .—Այսօր ճիշդ շարաթ մըն է աւանակին մէկին ետեւէն էի : 40 էյքըր պիտի առնէր : Քանի մը աճէնթներ բոլորը կը դառնային թիթեռնիկի պէս . բայց ես գլուխը փոսը ձգեցի : Քօնթրաքթը շինեցինք պրծանք . 2000 տօլարնոց չէքը ճէպս է , կը հասկնա՞ս 2000 տօլար , խաղալիկ չէ : (Մեղմօրէն Տիրանի ա-կանջն ի վար) խօսքը մէջերնիս , այդիին կէսը ալքա-լա էր , ալքալա :

ՏԻՐԱՆ .—Ուրեմն խաբեցի՞ր :

ՃԱՆ .—Խաբե՞լ :

ՏԻՐԱՆ .—Այո :

ՃԱՆ .—Հա՛ , հա՛ , հա՛ :

ՏԻՐԱՆ .—Ինչու՞ կը ծիծաղիս : Խաբելը ամենա-մեծ անբարոյութիւնն է :

ՃԱՆ .—Անբարոյութիւնն : Հա՛ , հա՛ , հա՛ :

ՏԻՐԱՆ .—Ինչու՞ կը խնդաս . առաքինութիւն՞ ըսեմ հապա :

ՃԱՆ .—Ո՛չ անբարոյութիւնն և ո՛չ առաքինու-թիւն :

ՏԻՐԱՆ .—Հապա՞ :

ՃԱՆ .—Ճարպիկութիւն :

ՏԻՐԱՆ .—Բացարձակապէս կը մերժեմ :

ՃԱՆ .—Բացարձակապէս կը հաստատեմ :

ՏԻՐԱՆ .—Իրաւունք չունիք :

ՃԱՆ .—Իրաւունքի փիլիսոփայութեան ժամա-նակը չէ : Պատուաւոր մարդը հարուստ մարդն է :

ՏԻՐԱՆ .—Գործնական մարդ ես : Ալ կ'զգամ որ ազգին խոչոր նուէր մը պիտի տաս :

ՃԱՆ .—(Թքուելով) Ազգի՞ն :

ՏԻՐԱՆ Այո՛ ազգին : Ես ձեզի չափ կարողու-թիւն ունենայի կէսը ազգին կուտայի :

Մէրի .—Ազգը՞ մեզի ինչ տուաւ :

ՏԻՐԱՆ .—Կեանք :

ՃԱՆ .—Ես բան մը չհասկցայ այդ կեանքէն : Հայաստան մը կայ կ'ըսեն , ո՞վ գիտէ , կա՞յ թէ չի կայ :

ՏԻՐԱՆ .—Այո կայ . ազա՛տ անկա՛խ Հայաստան մը՝ որ սակայն մե՛ծ կարիքներ ունի :

ՃԱՆ .—Ե՞րբ առանց կարիքի եղեր է որ : (Ու-քի կ'ելլէ) Հերիք է . տուր , տուր , տուր : Զահլէ տա-րին : Չունենայինք այդ Հայաստանը որ կարիքներ ունի :

Մէրի .—Որ միշտ անօթի է :

ՃԱՆ .—Որ միշտ մերկ է :

Մէրի .—Որ միշտ կը ջարդուի :

ՃԱՆ .—Որ միշտ հոգեվարք է :

Մէրի .—Բայց չի մեռնիր որ ազատուինք :

ՏԻՐԱՆ .—Նա չպիտի մեռնի և ընդհակառակը ձեզի պէս անզգաները մարդ պիտի ընէ :

Մէրի .—Մեր Հայաստանը Ամերիկան է :

ՃԱՆ .—Շիտակ է :

ՏԻՐԱՆ .—Օր մը Հայաստանն ալ Ամերիկա կ'ըլ-լայ :

ՃԱՆ .—Չեմ հաւատար :

Մէրի .—Կը տեսնե՞ս , Ամերիկան ի՞նչ կուտայ մեզի . այգի՛ , տ՛ուն-տեղ , օթօմօպիլ , դաշնակ , ա-մէն տեսակ վայելք ու հաճոյք : Հայաստանի՞ մէջ

Ի՞նչ տեսանք:

ՃԱՆ. — Արիւն ու արցունք:

Մէրի. — Ցաւ ու կարօտութիւն:

ՃԱՆ. — Բանտարկեալներուն համար տուր:

Մէրի. — Սովեալներուն տուր:

ՃԱՆ. — Արկածեալներուն տուր:

Մէրի. — Հերոսներու ընտանիքներուն տուր:

ՃԱՆ. — Որբերուն տուր:

Մէրի. — Կիւրիկիոյ տուր:

ՃԱՆ. — Բնակին տուր:

Մէրի. — Փոխառութեան տուր:

ՃԱՆ. — Դեսպանատան տուր:

Մէրի. — Տուր, տուր, տուր:

Տիրն. — Եւ ի՞նչ էք տուեր: Սէնթ մըն ալ չէք տուեր: Եւ յետոյ ուրախ չէ՞ք որ այս օր «սովեալներուն տուր» «որբերուն տուր»ին, «բանակին տուր, «դեսպանատան տուր»ը յաջորդեց:

ՃԱՆ. — Ինձի՞ ինչ: Բանակը, դեսպանատունը հաց չի տար ինձի: Այգի, տուն, օթօ դնող կա՞յ, ա՞նոր նայինք: Այդ խօսքերը փոր չեն կշտացներ: (Մէրիին) Հայտէ, Մէրի, պատրաստ ես, քանի Տիրտնըն ալ այստեղ է, երթանք մուկիին կիւրիկի քիչ մը դրօսներու:

Տ Ե Ս Ի Լ 4

ՆՈՅՆՔ և Ա. ՅԱՃԱՆՈՐԴ

Ա. ՅԱՃ. — (ճերս մտնելով) Բարև ձեզ: Այստե՞ղ կը բնակի պարոն ձանը:

— (ինկզինքը շարժման մէջ դնելով) Այո, այո, ես ինքս եմ: Հրամայեցէ՛ք, նստեցէ՛ք, սիկար մ'առէ՛ք (տուփը կ'երկնցնէ և լուցկի մ'ըկը վառէ, յետոյ Մէրիին) Մէ՛րի, շուտ դայՔէ մը պատրաստել տու՛ր մեր բարեկամին համար. (Մէրիին մեկուսի) նոր որս մըն է: (աքռու կը հրամցնէ նորեկին) Ի՞նչ հրաման ունիք:

Մէրի. — (դուրս կ'ելլէ սուրբ պատուիրելու ազախիցին):

Տիրն. — (կը մեկնի):

Ա. ՅԱՃ. — Հրամա՞ն, ոչ: Կ'ուզեմ այգի մը գնել:

ՃԱՆ. — (ոգեւորուած) Այգի՞:

Ա. ՅԱՃ. — Այո:

ՃԱՆ. — (վրայ տալով) Ի՞նչ պիտի այգի. քանի՞ էյքըրնոց. քաղաքին մօտի՞կ թէ հեռու. ջրաբեր՞ թէ անջուր. ծառաստան ունենա՞յ թէ ոչ: Տուն, ա՛խոտ, կըրած պէ՞տք է որ ունենայ միասին:

Ա. ՅԱՃ. — Այդ բոլորն ալ թող ըլլայ: Խնդրեմ, գնին շատին քչին մի՛ նայիք, միայն լաւ ըլլայ: Հո՞ղը պարարտ, ջուրը գլխուն վրայ. ծառազարդ և օղատուն: Ես իսթէն կուզամ, քիչ մը տկար եմ, կուզեմ եկրագործութեամբ պարսպիլ կազդուրուելու համար:

ՃԱՆ. — (իսքի անունը և հարուստ ըլլալը լսելով աւելի կ'ոգեւորի) Լաւագոյն բանն է որ մտածեր էք: Քալիֆօրնիան, մասնաւորապէս Փրէզիտօն, հիանալի կլիմա ունի: Ծատ նպատակայարմար որոշում է այդ: Գրեցէ՛ք իսթ ձեր բարեկամներուն, որ բոլորն այստեղ գան:

Ա. ՅԱՃ. — Ձեր էտվըրթայդը կարգացի թեր-

թին մէջ, որ այգիի, տան և քառի միջնորդութեամբ կ'ըրաղիք. և որ զլիսաւորն է, յայտարարած էք, թէ ամենայն բարեխղճութեամբ և ուղղամտութեամբ կ'ը կատարէք ձեզ յանձնուած գործերը:

ՃԱՆ. — Ատիկա մեր զլիսաւոր սկզբունքն է, որուն կը պարտինք մեր յաջողութիւնը:

Ա. ՅԱՃ. — Որուն վստահելով ես ուղղակի այստեղ եկայ՝ առանց ուրիշին հանդիպելու:

ՃԱՆ. — Շատ լաւ էք ըրեր: Այստեղ կան կարգ մը աճէնթներ, որոնք կը դաւաճանեն իրենց յայտարարած սկզբունքներուն: Անոնք ո՛չ միայն կը կողոպտեն գնողը՝ այլև կը շահագործեն ծախողը:

ՏԵՍԻԼ 5

ՆՈՅՆՔ յետոյ ՄԷՐԻ և ՏԻՐԱՆ

ՄԷՐԻ. — (նոյն միջոցին ներս մտնելով) Անանկ որ ո՛չ ծախողը գոհ կը մնայ իրենցմէ և ո՛չ գնողը:

ՃԱՆ. — Անանկ որ թէ գնողը դժգոհ է իրենցմէ և թէ ծախողը: Մենք այդպէս չենք: Կարելի՞ ըսն է որ մարդ խաբսխտութեամբ պարապի: Այդպիսի շառլաթանները չե՞ն որ մեր վարկը կը կտորեն ժողովրդին առաջ: Անոնք ստախոսներ են:

ՄԷՐԻ. — Խաբսխտներ են:

ՃԱՆ. — Կեղծաւորներ:

ՄԷՐԻ. — Կակուղ փուշեր են:

ՃԱՆ. — Քաղաքային աւազակներ:

ԱՆՆԱ. — (սուրմը բերելով կը ներկայացնէ հիւրին):

ՃԱՆ. — Հրամմեցէ՛ք: Այո, դուք լաւագոյնն էք ըրեր ուղղակի մեզի դիմելով: Վստահ եմ, որ ձեզ ամէն կերպ գոհ պիտի թողում: Իմ տրամադրութեան տակ ունիմ շատ մը այգիներ: Հատ մը կայ

20 էյքըր քաղաքէն 5 մայլի վրայ. 22,000 տօլար կ'արժէ. 5,000 կանխիկ, մնացեալին դիւրին պայմաններ: Շատ լաւ այգի մըն է. չորս կողմը ծառ ու ծաղիկներ: Հիանալի է: Դրախտի մը տպաւորութիւնը կ'ընծայէ:

Ա. ՅԱՃ. — Եւ մենք էրիկ կնիկ ...

ՃԱՆ. — (կատակելով) Այո, այո, և դուք էրիկ կնիկ Ադամ Եւայի պէս կ'ապրիք այնտեղ. միայն զգո՛յշ, Կենաց ծառէն չուտէք:

Ա. ՅԱՃ. — Թո՞ղ էր:

ՃԱՆ. — Այո թուղ էր: Էյքըրին մէկը ամբողջութեամբ Իզմիրի թուղ է: Ուրիշ մը կայ 40 էյքըր. Ֆաուլըրի կողմը. 38,000 տօլար կ'արժէ, 10,000 ը քէշ: Հիանալի հող, սքանչելի տեսարան, խնամով մշակուած: Ասոր տասը էյքըր Թամսըն է, տասը Մալախա, տասը Մսքէթ, հինգը Փիչիզ, մաս մըն ալ Ապրիքօթ և Իզմիրի թուղ: Մնացեալին դիւրին պայմաններ: Այս այգին ամէն կերպ յարմար է ձեզ: Տուն, ախոռ, կըրած, ամէնն ալ կան և նոր են: Ուրիշ մը կայ 60 էյքըրնոց՝ Սէնկըրի կողմը. 55,000 տօլար. 15,000 ը կանխիկ: Երկու ֆլուրնոց տուն, մեծկակ ախոռ մը, երկու առիւծի պէս ձիեր, հինգ կով, սայլ մը: Խոշոր կըրած, թհէնք հաուզ՝ որ ահագին քանակութեամբ ջուր կ'արտածէ: Ունի թուղի, փիչիզի, ապրիքօթի, լէմօնի, նարինջի և նուրի ծառեր ու հազար և բիւր տեսակ ծաղիկներ: Օդասուն՝ և բարեբեր հող:

ՏԻՐԱՆ. — (որ անկիւն մը նստած քեքք կը կարդայ, երբեմն Տիրամին կը նայի և դիտաւորեալ կերպով կը հազայ):

ՃԱՆ. — (առանց ուշադրութիւն ընծայելու) Այո

այգիին խաղողն է՝ որ անցեալ տարի ցուցահանդէսին մրցանակի արժանացաւ: Վերջապէս հիաալի հող, սքանչելի ջուր, աննման տեսարան՝ օդասուճեւ և առողջապահիկ: Ճիշտ ուճիշտ փնտոածնիդ: Հաւատացէք որ ամբողջ Քալիֆորնիոյ սթէյթին մէջ նմանը չկայ այս այգիին: Ես դրամ ունենայի առանց բոպէ մը կորսնցնելու կ'առնէի այս այգին: Կը տեսնե՞ս, հողերը օրը օրին կը սղեն. չամիչին գինը ամէն տարի զգալի բարձրացում կ'ունենայ: խորհուրդ կը տայի այս աննման առիթը չփախցնել: Երկու հողի ալ աչք ունին այս այգիին, արդէն բանակցութեանց մէջ ենք: (Այն միջոցին հեռախօսի գանգակը կը հնչէ, ձան կը փութայ հեռախօսին գուլար) հըլօ՛, ո՞վ է խօսողը, Ա՛... դու՞ք էք Փօ՛լ. հաու՞ ար ետէ՞նչ... այո, այսօ՞ր... օ՛ այդքա՞ն կ'աճապարէք: Ի՞նչ... տիփօղիթը... ըր՞... տիփօղիթը ըսիք: 60 ի՞նչ: Աա՛ ներեցէք, կէս ժամէն կ'ուզամ... այո, այո... եէս սըր, կուտայայ: (կը դառնայ յանախորդին մօտ) Լաւ ատենին հասար. աճապարեցէ՛ք քանի ուշ չէ. տիփօղիթը տուէք և այգիին տէր եղէք: Այս այգին առնել ուզողն էր որ հիմա խօսեցաւ թէ՛ լէֆօնով:

Տի՛րԱն. — (մեկուսի) Լաւ կը խաղայ իր դերը:

Ա. ՅԱՃ. — Բայց կանխավճարը շատ է:

ՃԱՆ. — Թէև կանխավճարը շատ է, բայց մնացեալին նպաստաւոր պայմաններ կան: Յամենայն դէպս, քու խէթէր համար, կ'աշխատիմ բան մը պակասեցնել: Լաւ դիտցէք, ուրիշին համար երբէք այգի պիտի բան մը չպիտի ընէի:

Ա. ՅԱՃ. — Ե՞րբ կրնանք այգիին տեսնել:

ՃԱՆ. — Ո՞րը: 20 նո՞ցը, 40 նո՞ցը թէ՛ 60 նոցը:
Ա. ՅԱՃ. — 60 նոցը:

ՃԱՆ. — (խելայեղ խանդավառելով ոտքի կ'ելլէ) Այո, այո, այս բոպէիս: (Մէրիին մեկուսի) 5000 մը զարկինք այս աւանակէն: (կը պատրաստուի մեկնելու՝ երբ ելեփորական գանգակը կուտան. և քիչ յետոյ աղախինի առաջնորդութեամբ ներս կը մտնէ Բ. Յանախորդը):

Տ Ե Ս Ի Լ 6

ՆՈՅՆԲ և Բ. ՅԱՃԱՆՈՐԴ

Բ. ՅԱՃ. — (մտնելով) Աս ըմբիշընը ձանին տու՞նն է:

ՃԱՆ. — Այո, այո, հրամմեցէ՛ք, նստեցէ՛ք. (աթուռ հրամցնելէ յետոյ սիկարի տուփը երկնցնելով) սիկար մ'առէ՛ք, (աղախինին) դայֆէ մը չու՛տ:

ԱՆՆԱ. — Օ բայթ: (կ'երթայ):

ՃԱՆ. — Ո՞ր կողմէն կուզաք:

Բ. ՅԱՃ. — Տիթրոիթէն:

ՃԱՆ. — Աա, ներողութիւն, ի՞նչ է ձեր անունը:

Բ. ՅԱՃ. — Չալի Թամսըն:

ՃԱՆ. — Օօ՛, Կարապետ Թովմասեան, հիանալի մ'կըտուի: Ինչպէս կը տեսնեմ դուք ճաշակի:

տէր մարդ էք: Ուրախ եմ ծանօթանալուս:

Բ. ՅԱՃ.— Ես ալ նոյնպէս:

ՃԱՆ.— (ցոյց տալով Ա. Յանախորդը) Ծանօթացէք պարոնին հետ՝ որ այդի մը գնել կ'ուզէ և ուղղակի ինձ եկեր է՝ լսելով իմ բարեխղճութեան և ուղղամտութեան մասին:

Բ. ՅԱՃ.— Ատոր համար է որ ես ալ ուղղակի հոս եկայ:

ՏԻՐԱՆ.— (կը մեկնի):

ՃԱՆ.— Բան մը գնելու նպատակ ունիք:

Բ. ՅԱՃ.— Կ'ուզեմ տուն մը գնել:

ՃԱՆ.— Ի՞նչպիսի տուն, միայա՞րկ, երկյա՞րկ, փայտեա՞յ թէ կղմինտրեայ. բանով սթրիթի վրա՞յ թէ երկրորդական. քա՞նի սենեակնոց. բազմիք ունե՞նա՞յ թէ ոչ:

Բ. ՅԱՃ.— Գլխաւոր պայմանը պէտք է ըլլայ օդասուն և առողջապահիկ. ամէն յարմարութիւններով և նկարչական տեսարաններով: Ես վատառողջ մարդ եմ, կ'ուզեմ քիչ մը կազդուրուիլ: Գինը հոգ չէ, միայն ուզածս ըլլայ:

ՃԱՆ.— (կնոջ հետ ակնարկի փոխանակութիւններ կ'ընէ): Օլ ըսյթ, ճիշտ այդպիսի շէնք մը կայ իմ տրամադրութեանս տակ. 10,000 տօլար կ'արժէ. 6000 ը կանխիկ կ'ուզեն. մնացեալին երեք տարի պայմանաժամ: Այս տունը թէյլը Մարտիրոսն ալ կ'ուզէ, բայց անոր չպիտի տամ. չեմ հաւնիր այդ մարդուն, շողջորդին մէկն է և խաբերայ: Առեւտրական գործ մ'ունեցայ իրեն հետ՝ քթէս բերնէս բերաւ: Ալ ուխտեցի անոր հետ պիղիկէս չունենալ: (հեռախօսը կը հնչէ. ձան կը մօտենայ և) Հըյօ, սըր,

ի՞նչ... տուն... այո... ե՞րբ: Շատ կը ցաւիմ: Երեք հազար: Էքսքիւզ մի: Կը ջանամ ժամ մը յետոյ այդտեղ ըլլալ: Հիմա... դժբախտաբար շատ պիղիկ եմ: Օլ ըսյթ, թէ՛նք եու. ըր՞... կուտայի:

Բ. ՅԱՃ.— Լաւ, այդ տունը ե՞րբ կ'ընանք տեսնել:

ՃԱՆ.— Երբ որ կամենաք: Պէտք է շտապել սալայն, կը տեսնէք որ գլուխս կը տանին: Գնանք տեսնենք ու քօնթրաթը շինենք:

(ներս կը մտնէ Տիրան ծրար մը քերքերով):

ՏԵՍԻԼ 7

ՆՈՅՆՔ և ՏԻՐԱՆ

ՏԻՐԱՆ.— Թրքական Դանադիրը այսօր Սէվրի մէջ ստորագրուած է: Հայաստանի անկախութիւնը իրապէս ճանչցուելէն յետոյ ահա իրաւապէս ալ կը ճանչցուի:

Ա. ՅԱՃ.— Իրա՞ւ. ուրեմն չուտով Հայաստան պիտի երթանք:

Բ. ՅԱՃ.— Սքանչելի լուր: Ո՞ր տեղէն է լուրը: ՏԻՐԱՆ.— Փարիզէն անթելով: Օգոստոս 10 ին Հայաստանի Հանրապետութեան կողմէ ստորագրուած է Ա. Ահարոնեան: Թուրքերը մեր գերեզմանք

վորեցին իրենք մէջը ինկան :

Ա. ՅԱՃ. — (ուրախ) ճշմարիտ է :

Բ. ՅԱՃ. — Կարծեմ տուն գնելու հարկ չսխալի մնայ :

ՃԱՆ. — (սրտնեղած) Աղբա՛ր, ճգեցէ՛ք այդ խօսքերը : Թուղթէ Դաշնագիրը ստորագրուեցաւ, օգուտն ի՞նչ : Մտաֆա Բէմալը խօսքով Հայաստան տուող չէ ձեզի : Մենք մեր գործը նայինք : Այդ խօսքերուն ասանկ երկրի մը մէջ հաց տուող չըլլար :

Ա. ՅԱՃ. — Այո, այո, մեր գործը նայինք :

ՃԱՆ. — Իրաւունք չունի՞մ, աղբար, ասանկ երկրի մը մէջ մարդ իր անձնական շահը փնտռելու է որ անօթի չմնայ : (յետոյ Տիրանին՝ որ անկիւն մը քաշուած քերք կը կարդայ) Աստուած չընէ, եթէ վաղը հիանդանաս, ջուր տուող մը չըլլար քեզի :

Բ. ՅԱՃ. — Ճիշտ է, եթէ դրամ չունենաս երեսդ նայող չըլլար :

ՃԱՆ. — Ողորմի հօրդ : Կ'ըսեմ, կ'ըսեմ չեմ կրնար հասկցնել : Մաղը մօրուքը ճերմկեր է, վաղ չ'անցնիր ազգային սէվտայէն :

ՏԻՐԱՆ. — (ինքնիքեմ) Այո, հայկական հարցը դիւանագիտորէն փակուած է այլևս :

ՃԱՆ. — Գետինն անցնի հայկական հարցը :

ՄԷՐԻ. — Դիւանագէտներն ալ հետը :

ՃԱՆ. — (յաճախորդներուն) Գնա՛նք մեր գործին ետեւէն :

(Տիրան և երկու Յաճախորդները մեկնելու կը պատրաստուին երբ Գ. Յաճախորդը կը մտնէ) :

ՆՈՅՆՔ և Գ. ՅԱՃԱՆՈՐԴ

Գ. ՅԱՃ. — (կը մտնէ օվբօլով ծեր մէկը, ըստ երեսօրթիմ կոպիտ) Պարոն ճան, սըքըն՛հէնա քառի մը տեղ զիտե՞ս :

ՃԱՆ. — Ի՞նչ կ'ընես, Մարկոս էմու, չես երեւիր : Առաջ եկու՛ր, նստէ՛ : (Մէրիին) Աղջի Մէրի՛, Մարկոս էմուն ձեռքովդ զայճէ մը եփէ՛. ծեր է, կ'օրհնէ քեզ :

ՄԷՐԻ. — Բարև, Մարկոս էմու, ի՞նչոր էս :

Գ. ՅԱՃ. — Աստուած կեանք տայ, եավրուս : (ձանին) քսան էյքըր մը առի տէ, սըքըն՛հէնա մը շի՛նի մը պէտք ունիմ :

ՃԱՆ. — Ո՞վ միջնորդեց, քանի՞ առի :

Գ. ՅԱՃ. — Չիտեմ աղբեր, խարեցին իս անաստուածները : Օրէնք հաւատ չէ մնացեր այդ մարդոց քով : Կը կողոպտեն մարդը : Մէյ մը որ թուերնին ինկար արունդ կը ծծեն տղրուկի պէս, միտք կ'ուտեն շան պէս՝ ոսկորդ կը թողուն :

ՃԱՆ. — Ո՞վ :

Գ. ՅԱՃ. — Ադ աճէնթ են ինչ զառնաղստի են :

ՄԷՐԻ. — Ի՞նչ կ'ըսես, Մարկոս էմու, ճա՞նն ալ ատանկ է :

Գ. ՅԱՃ. — Ի՞նչ զիտնամ աղջիկս, կ'ըսեն քի ամէնքն ալ ատանկ են :

ՄԷՐԻ. — Չէ, Մարկոս էմու, չէ : Աստուած չընէ :

որ ձանն ալ ատանկ ըլլայ: Չե՞ս տեսներ, այս մարդիկը տէ՛յ իսթէն ելեր եկեր են շխտակ ձանին՝ այդքի, տուն առնելու համար:

ՃԱՆ. — Այո, այո, ուղղակի մեզի են եկեր. որովհետեւ ես խղճով մարդ եմ: Ես ուրիշներուն պէս դրամդ քաշել չեմ նայիր: Աստուած կը յօժարի՞ որ խարես խուրեսով ձեռքերնուդ դրամը առնեմ տէգէշ ապրանք տամ տեղը: Է, նայիմ ի՞նչ տեսակ քառմը կ'ուզես:

Գ. ՅԱՃ. — Դիմացկուն բան մը ըլլայ քի ամէն վախճթ կըրածը չի տանիմ:

ՃԱՆ. — Որ ամէն ատեն գործածելու պատրաստ ըլլայ, անանկ չե՞:

ՏԻՐԱՆ. — (ընթերցումէն ուրախանալով) Հաստատանի մէջ ամէն մարդ աշխատանքի է լծուած:

ՄԷՐԻ. — Ի՞նչ անժամանակ աքաղաղի նման կը կանչես:

ՃԱՆ. — (անհանգիստ ու ջղագրգիռ մէկ արձուէն միւսը կ'անցնի) Նայէ Մարկոս էմու, ո՞ր Փապրիքին մալը ըլլայ:

ՏԻՐԱՆ. — Ռազմամթերքները անգլիական Փապրիքներէ կ'ստացուին:

ՃԱՆ. — (ջղայնուտած արագ կը շրջագայէ) Ճիշտ Գրայս, Տէր աստուած, դուն համբերութիւն պաս: (գսպելով ինքզինքը) Հա, ո՞ր Փապրիքին մալը ըլլայ:

Գ. ՅԱՃ. — Դիմացկուն թող ըլլայ տէ, որը կ'ըլլայ թող ըլլայ:

ՃԱՆ. — Մարկոս էմու, Փօրտ մը կայ 1918 ի, 400 տօլար, 200 ը քէշ կ'ուզէ, մնացածը տարիէ մը վճարելի: Շէվրօլէթ մը՝ 600 տօլար, 150 ը քէշ: մնացածը ութը ամիսէն վճարելի: Օվըրլէնտ մը կայ 1000 տօլար, 300 ը քէշ: Տօրթ մը՝ ...

Գ. ՅԱՃ. — Աման, աման. Տօրթ չեմ ուզեր. հատ մը առի լեզուս էրեցաւ:

ՃԱՆ. — Ամէն Տօրթ մէկ չըլլար:

Գ. ՅԱՃ. — Չեմ ուզեր:

ՃԱՆ. — Շատ լաւ: 900 տօլարնոց Տաչ մը և 1000 տօլարնոց Պիւիք մը կայ...

Գ. ՅԱՃ. — Մինչև հոտ իմ թեւս չի հասնիր:

ՃԱՆ. — Գիտեմ որ թանկ բան մը չես ուզեր:

Գ. ՅԱՃ. — Շխտակ է: Դիմացկուն ըլլայ:

ՏԻՐԱՆ. — (մեկուսի) Այո, Հաճընը և առհասարակ Կիլիկեցիք լաւ դիմացան: Կե՛ցցէ Լեոններու դիւցազնական աշխարհը: Պատմութիւնը ոսկէ տառերով պիտի քանդակէ ձեր հերոսամարտը, ձեր պանծալի անունները...

(Ճան և Մէրի գսպուած դժգոհութեան արտայայտութիւններ կ'ընեն):

Գ. ՅԱՃ. — Ի՞մ անունս պիտի գրուի:

(Ա. և Բ, Յանախորդները կը ծիծաղին):

ՃԱՆ. — Հա, Մարկոս էմու, պիտի գրուի մը՝ չինին ճակատը: (Տիրանին) Հերիք է պէ աղբար, ի՞նչ եղար դու այսօր: Մեռանք զնաց քու բանակիդ, Կիլիկիաիդ ձեռքէն. տէրտ ցաւ չունի՞ս: Ալ մարդ կա՞յ թէ միայն դու ես:

ՄԷՐԻ. — Ազգը դու՞ն պիտի փրկես:

ձԱՆ.— Աղղին ցաւերը միայն քեզի՞ են տուեր:

ձԱՆ.— Որբերը դու՞ն պիտի կերակրես:

Ա. ՅԱՃ.— Մեր ազգային սրբատականութիւններն ալ պէտք չէ մոռնանք, պարոն ձան:

Բ. ՅԱՃ.— Ճշմարիտ է. ամէն բան իր տեղը:

ձԱՆ.— Լաւ կ'ըսէք ամմա, կուսակցութիւններն ալ իրարու միս կը ծամեն. չեն միանար որ մենք ալ մեր ընկիւթը գիտնանք:

ՏԻՐԱՆ.— Հա', հա', հա':

ձԱՆ.— (Տիրանին) Չհանեցա՞ր: (Ա. Յանախորդին) Երթա՛նք աղբար, այդին տեսնենք: Այս տարուան քրէփը արդէն առնուած է: (Բ. Յանախորդին) Տունը ճամբուն վրան է, կը տեսնենք հիմա: (Գ. Յանախորդին) Անկից ալ կ'երթանք քաղը առնելու:

Ա. ՅԱՃ.— Երթանք: Կ'ուզեմ չուտ մը վերջացրնել: Կինս նամակ դրած՝ պատասխանի կ'սպասէ:

Բ. ՅԱՃ.— Երթանք: Արդէն կինս ճամբայ ելած է Տիթրօիթէն. չուտով այտակ կ'ըլլայ: Երթանք տանը ինդիրն ալ վերջացնենք:

Գ. ՅԱՃ.— Երթանք, իմ գործս ալ էճէլէ է:

(Ա. Բ. Գ. Յանախորդները ոտքի կ'ելլեն և ձանին կը հետեւին):

ձԱՆ.— Մէ'րի, պատրաստուէ՛ իրիկուան մուսկի փիքճիւր երթալու:

Մէ՛րի.— Այ էմ բէտի: (Կ'ուզէ առանձնասեւեակ երթալ):

ձԱՆ.— Օլ բայթ:

ՏԻՐԱՆ.— (Մէրիին) Մէ'րի:

Մէ՛րի.— Ի՞նչ է:

ՏԻՐԱՆ.— Շօ՞ երթալ կ'ուզէք:


Մէ՛րի.— Այո:

ՏԻՐԱՆ.— Դուք Շօ երթալու պէտք չունիք:

ձԱՆ և Մէ՛րի.— (Միաբերան) Ինչու՞:

ՏԻՐԱՆ.— Ձեր տունը ամէն օր ներկայացում կայ. ալ ի՞նչ հարկ կայ մուսկի փիքճիւր կամ թատրոն երթալու...:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



Ը Ն Կ Ե Ր Ա — Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն
Բ Ա Ր Ո Յ Ա — Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ձ Ա Կ Ա Ն
Ս Ի Ր Ա Յ Ի Ն — Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն

Ջ ՈՒ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք Ն Ե Ր

Տիկին Նոյեմզար, որ վերջէն հարստացած քաղաքապետի մը կին էր, քաղաքի երեւելիներուն խոնճոք մը կը սարքէ. ուր ներկայ կըլլայ նաև տիկնոջ դրացի Արութ քէհեային տղան Սաչատուր՝ որ նոր եկած էր մայրաքաղաքէն տասը տարուան բացակայութենէն յետոյ:

Տիկին Նոյեմզարի բարեկամներէն մէկը Պ. Սաչատուրը կը ներկայացնէ իրեն.

—Մայրիկ, մեր դրացի Արութ քէհեային տղան ինչօն է, երեկ եկաւ:

Տիկինը իր չինովնիկի կնոջ անձնասիրութիւնը չվերաւորելու նախանձախնդրութեամբ, շարժում մ'անդամ չընէր ինչ որ ինչօ ընդունելու:

—Մայրիկ, չլսեցի՞ր, մեր Արութ քէհեային տղան է, ինչօն:

«Ազնուական» տիկինը այդպիսի նուաստութիւններ չբարեհաճիր ընդունիլ:

—Մայրիկ, չէ՞ս իմանար, Պ. Սաչատուր Արամեան, Փեթրոկրատի իրաւարանական Ֆաբրիլթէթի փայլուն շրջանաւարտ սլոակուած «Տօքթ. Գիտութեանց» տիտղոսով և խոչոր եկամուտի հասած:

Տիկինը անմիջապէս կը շիտկուի և ազնուազարմ իշխանուհիի մը հանդիսաւորութեամբ Պր. Սաչատուրին կ'երկարէ ձեռքը և.

—Ուրախ եմ տեսնուելու: Ողորմած հոգի հայրիկդ միշտ կ'ըսէր, այս տղաս մեծ ապագայ պիտի ունենայ. կը տեսնեմ որ իր յոյսերը արդարացուցեր ես...:

*
* *

Միսիօնար մը պիտի քարոզէ ժողովարանի մը մէջ: Պատուելիի քարոզէն և աղօթքէն վերջ կ'սպասեն որ միսիօնարը դայ քարոզելու: Բայց ան կ'ուշանայ: Ժողովականները անհամբերութեան նշաններ ցոյց կուտան:

Պատուելին երկու հոգի կը ղրկէ միսիօնարին ետեւէ, որոնք տուն հասնելով կը տեսնեն որ միսիօնարը կախօրրանին մէջ իր կնոջ հետ տեղաւորուած կ'օրօրուին: Միսիօնարը զանոնք տեսնելով, թիւրիմացութեան մը տեղի չտալու կանխազդուչութեամբ կը յարէ Սաքսոնեան պաղարիւնութեամբ.

—Մի՛ զա՛յթակղի՛ք ա՛յս իմ կի՛նն է...:

*
* *

Ռամկավարական քարոզիչ մը Շ...եան, Ծրէգնօյի իր հօտին կը քարոզէ Քրիստոսի պատուիրանները՝ «Մի շնար, մի սուտ վկայեր, մի դողանար և այլն»: Ու իր ցերեկուան քարոզներուն ուղղամը

տօրէն հետեւելով գիշերները կը մտնէ ամերիկացի մը պարտէզը և... ընկոյզ կը գողնայ :

Ամերիկացին ընկոյզներուն զողջուիլը նկատելով իր Հնդիկ ծառայողներուն կը պատուիրէ հետամուտ ըլլալ : Մեր «Սրբակրօն հաւատացեալ» քարոզիչը յանցանքի վրայ կը բռնէ : Պարկեշտ ամերիկացին այսպիսի ինկածի մը դատարանին յանձնելը Հայութեան անպատուութիւն մը համարելով, կը դիմէ իր Հայ ծանօթներուն . որոնք զայն պատժելու և զգաստացնելու գործը յանձն կ'առնեն և 5 տօլար վանձելով խնճոյք կը սարքեն չմոռնալով հրաւիրել նաև մեր քարոզիչը, որ ամէն մեղքիս վրայ խմբազիր ալ եղեր է, աներեսարար ներկայ կ'ըլլայ խնճոյքին և կը մասնակցի... «կենացներուն» :



ԵՐԵՎԱՆԻ ՀՐԱՅԱՆԱԿԻՐՆԵՐ

ՈՐՈՆՅ ԵՐԱՍՄԱՆԱԿՆԵՐԸ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ

ԶՈՐՐՈՐԳԻ ՄԸ ԶԵՌՔԻՆ ՄԵՋ

ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Երկար ժամանակ բարեկամս չէի տեսած :
Քառասուն օր ու քառասուն դիշեր էր և ատիկս
երկար ժամանակաշրջան մըն էր մտերիմ բարեկամ-
ներու համար : Ուստի այս մեղապարտ զանցառու-
թիւնս դարմանելու համար քայլերս ուղղեցի բա-
րեկամիս տունը :

Միրոս ուժգին կը տրտիէր : Չար նախազգացում
մը պաշարած էր էութիւնս՝ երբ Ելեքորական զան-
գակը տուի :

Աղուորիկ սպասուէի մը դուռը բացաւ :

— Հուա՞ք քէն այ տու փօր ետ :

— Պարոն Ամբակումը տու՞նն է :

— Պարոն Ամբակում՞ը :

— Այո :

— Ըր... այո... ոչ' :

— Ի՞նչպէս թէ «այո» և «ոչ» : Կամ այո կամ ոչ :

— Տունն է. բայց պատուիրած է ոչ ոքին չըն-
դունիլ :

— Ինչու՞ :

— Չդիտեմ :

— Ըսէ՞ք իրեն որ ես եմ եկած :

— Ո՞վ էք դուք :

— Կուրնելիոս Յովասափեան :

Բարեկամս անշուշտ իր կարգին կարօտցեր էր
դիս : Չայնս լսելուն պէս դուրս եկաւ և ամուր մը
ձեռքէս բռնեց ու համարեա քաշքշելով ներս տարաւ :

— Է՛, պատմէ՛ տեսնեմ, ու՞ր էիր քառասուն օրէ
իվեր. չըլլա՞յ թէ քահանայ ձեռնադրուելու միտք
ունենաս :

— Քահանա՞յ : Լաւ կըլլար եթէ «ձգնաւորու-
թեան» ըսէիր :

— Ու՞ր էիր :

— Չբաղուած եմ. ըսաւ բարեկամս հեղինակա-
ւոր շեշտով մը :

— Ի՞նչով :

— Հէնց այդ է հարցը : Կը պատրաստեմ արտա-
սահմանի հայոց համար ՆՈ՞՞ ԲԱՌԱՐԱՆ :

— Արտասահմանի հայոց համար նոր բառարա՞ն :

— Այո : Տարօրինա՞կ գտար :

— Ոչ միայն տարօրինակ՝ այլ և անհեթեթ :

— Լսէ՛ : Ներկայիս հայերէն լեզուն այնքան թա-
փանցիկ և առաձգական դարձեր է արտասահմանի
մէջ, ընկերային ըմբռնումները այնքան դարձդար-
ձիկ և աղաւաղուած են՝ որ երբ գործ կ'ըսես՝ գորտ
կը հասկնան. գանձ կ'ըսես՝ տանձ կը հասկնան.
հողիս կ'ըսես՝ հողիդ ելլէ կը հասկնան. երբ Հա-
յաստան կը հնչես՝ վայաստան կ'ըմբռնեն : Եւ որ-
պէսզի այս չարափաստիկ քաշքուկներուն տեղի
չմնայ, բռտերուն թանձրացեալ և հաստատուն ի-
մաստ մը տալու մտահոգութեամբ ձեռնարկած եմ
այդ ծանր և պատասխանատու գործին :

— Հիանալի միտք է և գնահատութեան արժանի
նախաձեռնութիւն մը : Արդէն պատրաստութիւններ
ունի՞ր :

—Այո, առաջին գլուխը պատրաստ է: Յաջորդ գլուխներուն համար ալ բաւական աշխատանք կատարած եմ:

—Շահեկան բան մ'ըլլալու է: Կարդա՛:

—Բայց և դադանիք է:

—Կը կասկածի՞ս հաւատարմութեանս վրայ:

—Ամենեւին: Բայց խօսքը մեր մէջ մնայ:

Ու ես խոստացայ խօսքը մեր մէջ թողուլ. որով բարեկամս կարդաց իր նոր բառարանին Ա. գլուխը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՅ

Ն Ո Ր Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԱԶԳ. — Իմ անձս, իմ քսակս:

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ. — Շատ խօսիլ:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ. — Բամբասանք, հայհոյանք, դրպարտութիւն, չարամտութիւն:

ԱՄԲԱՐՏԱԻԱՆՈՒԹԻՒՆ. — Մեծութեան չափանիշ:

ԱՊԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ. — Քաղաքակրթութեան չափանիշ:

ԳՈՌՈՉՈՒԹԻՒՆ. — Արժանիքի չափանիշ:

ԲԱՐԵԿԱՄ. — Հարուստ մարդ:

ՊԱՏԻՒ. — Հարուստին մենաշնորհը:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ. — Ակնկալութիւն, շահ:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Խարել, հինգշարթի պըսակուիլ՝ ուրբաթ ապահարզան ընել:

ԱՊԱԿԵԴՐՈՆԱՅՈՒՄ. — Դաշնակցութեան գաղանիքը:

ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ. — Անմարտելի պտուղ մը՝ հայ քաղաքական կուսակցութիւններու համար. առտելի նոխազ մը՝ թուրքերուն համար:

ԳԱՂԹԱԿԱՆ. — Պատին ծակէն ելած ազէտ մը՝ որ

միշտ հիներու խորհուրդին? կը կարօտի:

ԶԱՐԴԱՐԱՆՔ. — Զարդացում:

ԵՐԵԿՈՅԹ. — Ուտել-խմել, պարել-քնանալ:

ՀԱՅԵՐԷՆ ԽՕՄԻԼ. — Մի՞ գուցէ քաղաքակրթութիւնը խուսափի իրենցմէ:

ՄԵՆ ԽՕՄԻԿՈՒԹԻՒՆ. — Յաջողութեան գաղանիք:

ՇՆՈՐՀՔ. — Լաւ հայհոյելու ընդունակութիւն:

ԴՐԱՄ. — Ամենակալ տէ՛ր, թո՛ղ զմեզս իմ:

ԼԱԻՈՒԹԻՒՆ. — Բարեւել:

ԹՂԹԱԽԱՂ. — Պատուաւոր դբաղում:

ՀԱՅ ՀՈՅԱՆՔ. — Յարգանք:

ԵԿԵՂԵՅԻ. — Աղջիկ տեսնելու վայր:

ԹԱՏՐՈՆ. — Երեւնալու վայր:

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ. — Կանանց ցուցահանդէս:

ԿԱՐԳՈՒԻԼ. — Կանաչ պղպեղ՝ անուշը լաւ է, կծուը կը լացցնէ:

ԳՈՐԾԻԶ. — Ամէն բան:

ՊՕՍ. — Գործաւորին սաղայելը՝ որ խէտլ մըն է միտածանակ:

ՄԷՆԷՃԼՐ. — Տամ քեզ իշխանութիւն կապելոյ և արձակելոյ:

ԽՄԲԱԳԻՐ. — Եթէ հնար է գրաշարութիւն ալ ըրէ:

ԲԱՆԱՍՏԵՂԾ. — Առտուն կանուխ ելողը:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ. — Մերթուածներու կամ յուսալքուածներու սրտի... միտթարանքը:

ԺՈՂՈՎ. — Հաշուեյարդարութեան կայան:

ՄԻԶԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԺՈՂՈՎ. — Երկու օրուայ համար գինադար կնքել՝ երրորդ օրը թշնամութիւնները վերսկսելու պայմանով:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ. — Հիւանդութիւն մը՝ որմէ կը

Հրաժարին բայց վաղ չեն անցնիր :
 ՆՈՒԷՐ .— Խոստանալ չտալ :
 ՄԱՄՈՒԼ .— Բանակատեղի :
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ .— Ահազանդ , մարտահրատէր :
 ՊԱՅՔԱՐ .— Թշնամանք :
 ԹՇՆԱՄԻ .— Կուսակցութիւններն իրարու :
 ՅԱՂԹԱՆԱԿ .— Ով շատ հայհոյեց , ով լաւ հայհոյեց :
 ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ .— Բաժանման սաղմ :
 ՓԱՐԻՉԵԱՆ Ա . ՀԱՄԱԳՈՒՄԱՐ .— Խորթ դաւակ :
 ՓԱՐԻՉԵԱՆ Բ . ՀԱՄԱԳՈՒՄԱՐ .— Վիժած դաւակ :
 ԱԶԳ . ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ .— Այժմ ստուեր :
 ԱԶԳ . ՄԻՈՒԹԻՒՆ .— Ամերիկայի մէջ խրտուելակ :
 ՄԻՈՒԹԻՒՆ .— Ամէնքը կը սիրեն՝ խօսքով , բայց ա-
 մէնն ալ կը խուսափին անկէ :
 ՀԱՅ ԲԱՆԱԿ .— Շատերու համար սրբութիւն սրբոց ,
 պահպանողականներուն համար ալ թէև այդ-
 պէս է , բայց . . . Ի՞նչպէս խոստովանիլ :
 Ա . ԱՀԱՐՈՆԵԱՆ .— Տէ՛ր , հեռացու՛ր այս բաժակը
 յինէն՝ զի մարմինս յօժար է , բայց հոգիս տկար :
 ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ .— Երբեմն կաթողիկոսին պոչը ,
 այժմ պատրիարքին պոչը :
 ԱՆԴՐԱՆԻԿ .— Երբեմն հերոս , այժմ Նուպարին պոչը :
 ՊՈՆԱՓԱՐԹԵԱՆ .— Անդրանիկին պոչը :
 ՄԱԼՔՈՄ .— Նուպարին լաքէն :
 ԹԷՔԷՆԱՆ .— Նուպարին եամաղը :
 ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ .— Թուրք հայասէր :
 Ա . ՉՕՊԱՆԵԱՆ .— Պարոն Չօպանեան , սա փողը փչէ՛ .
 — Եթէ փողերը զրպանս հնչէ :
 Ա . ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ .— Յաւիտենական ներկայացու-
 ցի՞ն ? Արեւմտահայ փախտականներու :

ՏՕՔԹ . ՆԷՎՐՈՒԶ .— Գաղտնիք Փարիզի :
 ՍՎԱԶԼԵԱՆ .— Գարտաշեանի անէծքը :
 ԳԱՐՏԱՇԵԱՆ .— Սվազլեանի հոգէտուր :
 ՏՕՔԹ . ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ .— Գալէ՛ դժուած ուղիէն :
 «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» .— Դառն պտուղ մը՝ «Արձագանդ
 Փարիզի»-ի համար :
 «ԱՐՁԱԳԱՆԳ ՓԱՐԻՉԻ» .— Արձագանդ Նուպարի :
 «ՊԱՀԱԿ» .— Հողմաղաց :
 «ԱՐՕՐ» .— Կիլիկիաէն դուրս Հայաստան չկայ :
 «ԱԶԳ» .— Երգուեալ հաւատարմատար «Մրտե-
 ցէք»-ի վարդապետութեան :
 «ՆՈՐ ԿԵԱՆՔ-ՍԻՍՈՒԱՆ» .— Ո՛վ կացցէ ի խորանի
 քում . . . կամ ով բնակեսցէ ի վերնատանն քո :
 «ՁԱՆԱՍԷՐ» .— Տէրը ողորմած է :
 «ԵՐ . ՀԱՅԱՍՏԱՆ» .— Պատաւին մինուճար աղջիկը :
 «ՅԱԽԱԻԵԼ» .— Ղատա պէլա սանտրղը :
 «ԺՈՂՈՎՐԴԻ ՉԱՅՆ-ԺԱՄԱՆԱԿ» .— Բարի վայելում :
 «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» .— Մեծ փառքի մը փոքրիկ Յու-
 չարձանը :
 «ՀԱՅՐԵՆԻՔ» .— Կամ Հայաստանը կը ճանչնաք՝
 կամ թրքութիւնը կ'ընդունիք—կ'ըսէ :
 «ԱՍՊԱՐԷՉ» .— Կամ մեղի՛ կամ անոնի :
 Արդ , սիրելի՛ ընթերցող , եթէ կը խոստանաս քու
 կարգին , բարեկամիս դաղտնիքը մեր մէջ թողուլ ,
 ես ալ կը խոստանամ , ԲԱՌԱՐԱՆԻՆ միւս գլուխնե-
 րը հրատարակութեան տալ դալ տարի՛ եթէ ողջ մը-
 նամ ի հարկէ :

մտերմօրէն առ Յիսուս

Տէր իմ Յիսուս, եղի՛ր ինձ լոյս,
Բան մ'ըսէ սա խաւար հոգուոյս.
Արթնցուր զիս մեղաց քունէն,
Ուր խրուած եմ ամէն ատեն:

Ո՛վ դու սիրոյ ովկեան անհուն,
Գիրկդ պառկիմ սուտու, իրկուն.
Թէ՛մպէ՛լս ըլլամ սիրոյդ վկայ
Այսօր, վաղը, երբ կարգը գայ:

Ո՛վ տէր, եղի՛ր մեծ բաղնեպան
Քէօսէ մ'ըրէ ինչ կըլլայ ճան.
Աղտերու մէջ կոբայ, մեռայ,
Մաքրէ, սրբէ տէր, քեզ մեղայ:

Թէ՛ւ քովդ շուտ գալ կ'ուզեմ
Քուրիկներէն ի՞նչոտը անցնիմ,
Նախշուն, սիրուն... հազար մեղայ,
Զըլլայ գլխուս բերես պէ՛լայ:

Հոգիս քեզի մատաղ կ'ընեմ
Երբ ծերանամ դառնամ անպէտ.
Սա աշխարհը թոյ վայելեմ
Օր մ'աւելի... քանի կէնձ եմ:

—Ի՞նչ կը խորհիս Դաշնակցականներու մասին:
—Ջուրն իյնալ լողալն ալ գիտեն ելլել դողալն
ալ: Տեղին համաձայն թունդ ազգայնական են և թէ
թունդ ընկերավարական: Եթէ չըջապատը ազգայնա-
կան է՝ սօցիալիզմի մասին չեն ճառեր և փոխադար-
ձաբար: Այս տեսակէտէն Դաշնակցական դործիչ-
ները անմրցելի են:

—Բայց չէ՞ որ սօցիալիզմը չի ժխտեր ազգային
գաղափարը:

—Երկու թունդերը իրարու հետ չեն երթար
թէ՛ւ, բայց անոնք այսօրուան հաւը վաղուան սագէն
նախընտրելի է, կ'ըսեն ու կ'ապրին օրուան կեանքը:

—վաղուան մասին չե՞ն մտածեր:

—վաղուան թելադրանքին կ'անսան:

*

* *

—Ի՞նչ տարբերութիւն կայ Բիէն Լօթին և
Գաբրիէլ Նորատունկեանին միջև:

—Տարբերութիւն մը չկայ. Բիէն Լօթին կը-
սէ. «Թուրքերն ու Թրքուհիները ճէնթլմէններ են
և ընկերային բարձր առաքինութիւններով օժտը-
ուած», մինչդեռ Նորատունկեան կ'ըսէ. «Ես անկեղծ
հաւատացած եմ Թուրքերու լայնամիտ և արդարա-
սէր ըլլալու մասին»:

*
* *

—Ի՞նչ կը բուսնի ամենէն շատ Ամերիկայի հայոց մէջ:

—Բանաստեղծներ:

—Ի՞նչպիսի անուն կը կրեն անոնք:

—Զոյգ:

—Ի՞նչու:

—Որովհետեւ անոնք նախ սովորական մարդու մը անունը ունին, երկրորդը բանաստեղծներու սահմանուած Պառնասեան մկրտութիւն մըն է՝ իրենց բանաստեղծ ըլլալը ասպնցուցանելու համար:

*
* *

—Ո՞վ է քաղաքագէտը Ամերիկահայոց մէջ:

—Առտուն կանուխ ելլողը, ձեռքը գրիչ բռնողը:

—Ո՞վ է բարոյագէտը:

—Ամենքս ալ բարոյագէտներ ենք:

—Իսկ ո՞վ է բարոյական մարդը:

—Այդ ուրիշ տեղ փնտոէ:

*
* *

—Սամսոնը ի՞նչու իշու ծնօտ առաւ Փղշտացիները հալածելու համար:

—Որովհետեւ ձիւ էր, կրնար շատ դիմանալ:

—Օ՛, եթէ ան գիտնար թէ որքա՞ն ձիւ են մեր Ամերիկայի փօլիթիքսներու ծնօտները...:

*
* *

—Յակօր, վերջերս քեզ միայն եկեղեցին կըրնամ տեսնել:

—Որովհետեւ ես ալ Հայ աղջիկները միայն եկեղեցին կըրնամ տեսնել:

—Ամուսնանալու մի՞տք ունիս:

—Չէ, գեղագիտական ճաշակս կը զարգացնեմ:

*
* *

—Տիգրան, ճաշակդ շատ նրբացած կը տեսնեմ:

—Իրաւունք ունիս, որքան քսակս նիհարցաւ՝ ճաշակս այնքան նրբացաւ:

*
* *

Բժիշկը քննեց Յրէզնօի հարուստ հայու մը գանկը:

—Ի՞նչ գտաք, պարոն բժիշկ:

—Մէկ մաս ալքալա, մէկ մաս չամիչ, մէկ մաս էյքըր և մէկ մաս հարիէն:

*
* *

Պոլսէն Ամերիկա բերուած աղջկայ մը պսակի ատեն տէր հայրը կը հարցնէ.

—Աղջիկս, ցմահ հնազա՞նդ ես:

Աղջիկը, որ մինչև այդ ատեն իր փեսացուն տեսնելու բարբախտութիւնը չէր ունեցած, ապա-

դայ պատասխանատուութենէ վախնալով, ուշադր-
բութեամբ փետին երեսը նայելով.

—Տէր հայր, այս այն մարդը չէ, որուն նկարը
ինձ դրկուած էր:

—Ի՞նչէն գիտես այդ գաւակս:

—Իմ ստացած նկարս երիտասարդ, գեղեցիկ և
կենդանի մարդու մը նկարն էր. իսկ աս ծեր, տգեղ
և անկենդան մէկն է. ըսելով կ'առնէ կը քայլէ:

*

* *

—Ի՞նչու փառտորը և ներկը կը սղեն:

—Հայ աղջիկներուն հարցու՛ր:

—Օրի՛որդ, ի՞նչու կը սղեն:

—Մայրիկիս հարցուր:

—Տի՛կին, ի՞նչու կը սղեն:

—«Սենթը խրատն ինչ ընէ, սեւը սապօնն ինչ
ընէ...»:



ՀԱԻԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ՅԵՏԱԴԻՄԱՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐՈՒ

Հաւատամք ի մի Ռամկավարութիւն՝ կամօքն
Պօղոս փաշային և իր ձագուկներուն Թէքէի և Մա-
լէզի, գործակցութեամբն երեւելի և աներեւոյթ ան-
ձանց:

Ունինք մենք թերթեր հայանուն, որք շարունակ
փառօքն մեր եգիպտացի հօր, կը դատեն, կը փետեն
ամէն կարգի կենդանի և մեռեալ գործիչք և զմտա-
ւորականսն՝ որք չեն պատկանիր մեր կուսակցու-
թեան:

Որ էջն ի հայկական կեանք, կը խօսինք և կը
գոռանք. իսկ երբ հարկ ըլլայ զոհաբերութեան՝
պայծան կը դնենք և կը խուսափինք:

Հաւատամք Ազգային Պատուիրակութեան և ոչ
թէ Հանրապետութեանն Հայաստանի՝ զի մեր մար-
դիկ մաս չունեցան անոր կազմութեան մէջ և մաս
չունին անոր ներկայ կառավարութեան մէջ և հոն
մեր մարդիկ կոչուած չեն ոչ փառքի և ոչ պաշտօնի:

Հաւատամք Ազգայնականութեան և ոչ յեղափո-
խութեան՝ որ կոտորեաց ժողովուրդն մեր հայկեան:

Իսկ որք ասեն թէ մենք դէմ ենք անկախութեանն
Հայաստանի և կամ թէ նորա կառավարութեան,
զայնպիսիս պիտի նզովեն ընկերքն մեր Բարգէն ե-
պիսկոպոս և պատուելի Սագօեան:

Իսկ մենք փառաւորեսցուք մեր Նուպարն ու Նո-
րատունկեան, Նազարն ու Թէրզիպաշեան, տօքթ-
Պարթընն ու Մօրկնիթօն՝ որոնց պաշտօնները կը մը-
նան ցկեանս, յաւիտեան:

ԾՈՒՌ-ՔԱՐ

Է Յ Ք Ր Ի Ձ Մ

Բժշկութիւն, մեքենագիտութիւն, երկրաչափութիւն, մաթեմատիք, տիեզերագիտութիւն անունով գիտութիւններ լսած էի եթէ չէի կարդացած: Նոյնպէս գիտէի որ կան և այլ ընկերային վարդապետութիւններ՝ ինչպէս Քրիստոնէութիւնը, Տարուհնականութիւնը, Սօցիալիզմը ևն. որոնք կը խօսին մարդուն ծագման, բնաշրջումի և ընկերական կազմակերպութեան ու յառաջգիւծութեան վրայ:

Բայց երբէք մտքէս չէր անցներ, որ Քալիֆօրնիայ մէջ ալ կայ ու կը զարգանայ նոր գիտութիւն մը, վարդապետութիւն մը, որուն ջերմեռանդօրէն կը հետեւին՝ Բժիշկն ալ, Սոսեւորականն ալ, Իրաւագէտն ալ, Գիւղատնտեսն ալ, Ուսուցիչն ալ, Արհեստաւորն ալ, Վարդապետն ալ, Պատուելին ալ, Հոռոս տուտուն ալ, Համբիկ աղբարն ալ:

Այդ էյֆրիզն է:

Այս գիտութիւնը ունի իր պաշտօնական Փաշիւթէն, զանազան ակադեմիական ստորաբաժանումները, ուր կը մարդուին, կը մշակուին բոլոր հետազոտները՝ լաւագոյնս կիրարկելու համար անոր թէրատրած օրէնքներն ու սկզբունքները կեանքի մէջ:

Մանր ու մեծով այս համալսարանը կը յաճախէ Յրէզնօի գրեթէ ամբողջ հայ հասարակութիւնը:

Չամչարանութիւնը այս գիտութեան ամենա-

ղլխաւոր ճիւղն է:

Ամեն կողմ այսպէս չամիչ ու էյբըր, էյբըր ու

չամիչ:

—Քա Արեգ, աղջիկդ տղուս տուր:

—Քանի՞ էյբըր ունի տղադ:

Հոգ չէ թէ պոչով կոտոչով ըլլայ տղան. խենթ ու խելառ բան մը, առաւ փախաւ մը կամ աւազակ սրիկայ մը, բաւական է որ էյբըր ունեցաւ: Բոլոր բացասական կողմերը կը հակադրուին էյբըրով ու աղջիկը կը կարգեն— այսպէս ըսած— էյբըրին հետ:

—Բարև բժիշկ, ինչպէ՞ս էք:

—Այս տարի «Թամսըն»ներս լաւ բերք չտուին— «մալակա»էն բան մը կ'սպասէի, ան ալ փուճ դուրս եկաւ: Պիտի ծախեմ և 50 էյբըր մը առնեմ:

—Ինչպէ՞ս էք պատուելի Փափազեան:

—Օլրայթ եմ: Այն օրէն երբ քարոզիս վրայ բարեպաշտ եղբայրս 60 էյբըր դնելէն վաղ անցաւ և ես գնեցի Տիրոջը հրամանով, շատ լաւ ժամանակ կ'անցընեմ: Բերքս լաւ է և փառք կուտամ Տիրոջը որ ինձի դամէթ ըրաւ առնելու: Եթէ այդ հասարակ մահկանացուն առնէր, որքան ամբարիչութիւններ երեւան կրնային գալ:

Երեկոյթի մը ատեն փաստաբան մը կը հարցնէ ուսուցչի մը:

—Ինչպէ՞ս են դործերը:

—Ոչ ցանկալի: 10 էյբըրի չափ իսկ դրամ չհաւաքուեցաւ սա մեր յօբելեանական հանդէսէն: Ապերա՛խտ ժողովուրդ: Իսկ ձե՞րը:

—Հիանալի: 40 էյբըրէս այս տարի 15 հազարի բերք պիտի առնեմ:

Հարսանեկան հանդէսի մը մէջ :

—Փեսայ, ի՞նչպէս կզգաս :

—Գերազանցօրէն լաւ :

—Ի՞նչ բերք կ'սպասես այս տարի :

—70 թըն չամիչ : Գիտես որ բնաւ չ'պիտի կարգուէի եթէ յոյսերս չպսակուէին :

Սմբազրատնէ մը ներս կը մտնես բան մը լսելու օրուան քաղաքական կամ ընկերային խնդիրներու շուրջ :

—Եղբայր, ո՞ւր մնաց սա Չամիչի Ընկերութեան էտուըրթայզը :

—Սմբազրական մը գրէ սա Չամիչի Ընկերութեան դատավարութեան շուրջ :

Կրօնակիր ետ կը դառնաս : Կիրակի օր եկեղեցի կերթաս, մտածելով որ դոնէ աշտեղ ազատ պիտի ըլլաս էյբրիզմի և Չամչարանութեան մտալիւումէն : Չարաչար կը սխալիս, տեսնելով եկեղեցիին առջևի բազմութիւնը, որոնք կը խօսին, կը վիճին, կ'առնեն, կը ծախեն հարիւրաւոր էյբրներ : Եկեղեցին աւարտելէն յետոյ :

—Քա տուտու, ինտո՞ր ես :

—Ինտո՞ր պիտի ըլլամ : 20 էյբրը պիտի առնէր տղաս, սա՛ կողպակոտպին տղան (ցոյց տալով քիչ հեռուն կանգնած կնիկ մը) ջուր խառնեց եփած սո՞պուրին մէջ :

—Շնորհաւոր ըլլայ, Աստուած Երկար կեանք տայ. լսեցի որ աղջիկը նշանած ետ Յակոբին. հա՞. լաւ տղայ է, 30 էյբրը ունի :

Թաղումէ մը վերջ յուղարկաւորները սրտահարջուքի կ'երթան ննջեցեալին տունը :

—Թորոս, չամիչին գները կ'ըյնա՞ն եղեր :


—Ընդհակառակը :


—Կը խորհիմ որ 40 էյբրը շատ թանկ գնով առի և պիտի վնասեմ :

—1000 տօլար շահ կուտամ —մէջ մտաւ աղիէն անէնք մը— եթէ ծախելու միտք ունիս :

Ու այսպէս ամէն տեղ «էյբրիզմ» և «չամչարանութիւն» : Եկեղեցին, ժողովարանը, խմբագրատան մէջ կամ բժիշկներու, իրաւագէտներու, փրօֆէսէօրներու գրասենեակներէն ներս, խանութներուն տըներուն և փողոցներուն վրայ էյբրիզմ ու էյբրիզմ ուրմէ դուրս պրծելու համար ուր երթալիչ չես գիտեր :

Ու գեղեցիկ ժամանց մ'ընելու համար կամ պիտի հեռանաս Քալիֆօրնիայէն կամ պիտի վարակուիս այդ դաւանանքէն՝ որ Հաւատաւմ մը դառնայ սկսած է և որ, որոշ բաւականութիւն կուտայ գեղազիտական ճաշակէ զուրկ սա՛ «մեծ» մարդոց՝ որոնց մեծութիւնն? ու արժանիքը? էյբրով կը չափուի :





ԻՆՉՊԻՍ ԿԸ ՔԱՐՈՉԵՆ

ՄԵՐ

ՀԱԻԿԹԵՆ ՆՈՐ ԵԼԱԾ ՓՈՐՁԱՌՈՒՆԵՐԸ?

Ընկերներ՛ր,

Դուք գիտէ՞ք որ, քառասուն տարիներէ ի վեր մեր ընկերները բանտերու մէջ, կախաղաններու վրայ, աքսորներու սարսափին տակ այսօրուան ազատութիւնը երկնեցին: Կը հաւատա՞ք:

— Հայ հա՛յ...

Հայաստանի ներկայ վարիչները ազնուական չեն, գիտնական չեն, վսեմաչուք չեն, տիպոս

չունին. գրպաննին սանթիմ չկայ: Հետեւաբար չեն կրնար մեր ուզածին պէս կառավարել երկիրը: Ի՞նչ կ'ըսէք ասոր:

— Համաձայն ենք:

Անոնք Պօլշեւիկ են. համայնացում կուզեն. մեր սեփականութիւնները կուզեն խլել մեր ձեռքերէն: Կրնա՞ք հանդուրժել այդ բանին:

— Ամենեւին:

Անոնք ազատ սէր կը քարոզեն: Կրնա՞ք մարտել այդ սրբապղծութիւնը:

— Երբէք:

Անոնք կրօնական հաւատալիքներու դէմ են. անկրօն են:

— Շիտակ է:

Անոնք մեր դարաւոր թշնամիին հետ հաշտութեան դաշինք կնքեցին և չնորհ ստացան այսօրուան անկախութիւնը: Ինձէրին և Թալեաթին ընկերներն են անոնք: Ձեր հայրենասիրութիւնը չի՞ բողոքեք այդ ազդադաւուրթեան դէմ:

— Բուռն կերպով կը բողոքէ:

Անոնք Կիլիկիոյ վերաբերմամբ դաղջ քաղաքականութեան կը հետեւին:

— Ճիշտ է:

Տաճկահայերը չեն սիրեր և մեր 300,000 փախըստականները Կովկասի մէջ անօթի մեռուցին:

— Ճամարիտ է:

Անոնք չի կոուեցան, միայն Անդրանիկը կոուեցաւ:

— Ուղիղ է:

Անոնք վրացիներու և թաթարներու դէմ կոտորեցան . կոտորեցան են : Հեռատես չեն : քաղաքականութենէ լուր չունին :

— Իրաւ է :

Անոնք մենատիրութեան կը ձգտին :

— Իրականութիւն է :

Կօալիսիօն դահլիճ չեն կազմեր որ մեր երկարամեայ փորձառութիւններէն հայրենիքը օգտուի և մէկ օրէն միւսը բարեկարգուի :

— Կը հաստատենք :

Ամփարան են , այլամերժ են , մեզի չեն հաւնիր :

— Իրե՞նց ով կը հաւնի :

Հանրապետութեան տարեդարձը չտօնելը հայրենասիրական քայլ մըն է :

— Այո՛ :

Անոնք 20 միլիոնի փոխառութիւնը կընեն որ իրենց կուսակցական դիրքը ամրապնդեն և ոչ թէ երկրի պէտքերուն հասնին :

— Իրաւունք ունիս :

«Փրկութեան Հանդանակութեան» չմասնակցեցան , այլ բանակի հանդանակութիւնը առաջ քշեցին :

— Այդպէս է :

Ապակեղրոնացման դրութեան կը հետեւին և երկիրը կը մատնեն աղէտներու :

— Ի հարկէ :

Խան խոյսկին սպաննեցին :

— Այո , աչքովնուս տեսանք :

Կոտորածներու պատճառը անոնք եղան :

— Պատճառը անոնք եղան :

Ազգին տունը քանդեցին :

— Տունը քանդեցին :

Ներկայ դժբախտութիւններու պատճառն ալ անոնք են :

— Անոնք են :

Ուրեմն անկցի Դաշնակցութիւնը :

— Անկցի :

Որպէսզի տեղը մենք անցնինք :

— Մենք անցնինք :

Բոլոր պաշտօնները մեր մէջ կը բաժնենք և . . . դերքի ու տիտղոսներու կը տիրանանք : Այնպէս չէ՞ :

— Ղա՛ , զա՛ , զա՛ , (ուրախութեան և ցնծութեան արտայայտութիւններ :

Ու ժողովը ցրուեցաւ բարձր տրամադրութեան տակ :



ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

—Ի՞նչ արտաքին ունի Դաշնակցականը :

—Ուղիղ կեցուածք, կուրծքը դուրս, աչքերը սեւեռուն, քայլերը չափուած, ինքնավստահ և խր-
րոխտ :

*

* *

—Ի՞նչ գիտես Ս. Դ. Հնչակեաններու մասին :

—Աչքերը բաց կը քնանան :

*

* *

—Ի՞նչ կը ներկայացնեն Վերակազմեալները :

—Կասկածոտ, յարափոփոխ, սպասողական,
անյոյս վիճակ մը :

*

* *

—Ի՞նչ գիտես ոամկավարներու վրայ :

—Առջեւին կը նայեն, դաւադիր, վեհերոտ,
կամացուկ, կասկածոտ, անյոյզ, անվստահ են :

ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱՅ 1920-ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐԸ

Հայաստանի մէջ

- | | |
|--------------------|--------|
| 1.— Յառաջ | Երեւան |
| 2.— Ռազմիկ | Երեւան |
| 3.— Հայաստանի Զայն | Երեւան |
| 4.— Ժողովուրդ | Երեւան |

Վրաստանի մէջ

- | | |
|-------------------|--------|
| 5.— Նոր Աշխատաւոր | Թիֆլիս |
| 6.— Մշակ | Թիֆլիս |

Պարսկաստանի մէջ

- | | |
|--------------|--------|
| 7.— Հորիզոն | Թէհրան |
| 8.— Առատ | Թէհրան |
| 9.— Բորոխ | Թէհրան |
| 10.— Մինարէք | Թաւրիզ |
| 11.— Զանգ | Թաւրիզ |

Կիլիկիոյ մէջ

- | | |
|--------------------------|-------|
| 12.— Կիլիկիա | Ատանա |
| 13.— Տարոս | Ատանա |
| 14.— Հայ Զայն | Ատանա |
| 15.— Կիլիկեան Սուրհանդակ | Ատանա |

Տանկաստանի մէջ

16.— Ճակատամարտ	Պոլիս
17.— Երկիր	Պոլիս
18.— Ժողովրդի Չայն— Ժամանակ	Պոլիս
19.— Առաւօտ	Պոլիս
20.— Վերջին Լուր	Պոլիս
21.— Երեւան	Պոլիս
22.— Ոստան	Պոլիս
23.— Դարման	Պոլիս
24.— Հայ Բժիշկ	Պոլիս
25.— Հայ Կին	Պոլիս
26.— Կավոօշ	Պոլիս
27.— Հայ Սքանուտ	Պոլիս
28.— Շաւիղ	Պոլիս
29.— Երկուշաբթի	Պոլիս

Իզմիրի մէջ

30.— Գոյամարտ	Իզմիր
31.— Հորիզոն	Իզմիր
322 Արեւելեան Մամուլ	Իզմիր

Պուլկարիոյ մէջ

33.— Հայաստան	Սօֆիա
34.— Պալքանեան մամուլ	Սօֆիա

Ֆրանսայի մէջ

35.— Վերածնունդ	Փարիզ
36.— Արձագանգ Փարիզի	Փարիզ
37.— Խարազան	Փարիզ
38.— Արմենիա	Մարսիլիա

Իտալիոյ մէջ

39.— Բազմալէզ	Վենետիկ
	Աւստրիոյ մէջ
40.— Հանդէս Աւստրիայ	Վիէննա
	Եգիպտոսի մէջ
41.— Յուսաբեր	Գահիրէ
42.— Արև	Ալեքսանդրիա
43.— Միութիւն	Գահիրէ
	Ամերիկայի մէջ
44.— Հայրենիք	Պոսթոն
45.— Փիւնիկ	Պոսթոն
46.— Յախաւել	Պոսթոն
47.— Ասպարէզ	Ֆրէզնօ
48.— Կռունկ	Ֆիլատէյֆիա
49.— Ազգ	Պոսթոն
50.— Նոր Կեանք— Սիսուան	Ֆրէզնօ
51.— Պահակ	Պոսթոն
52.— Արօր	Ֆրէզնօ
53.— Զանաւեր	Ֆրէզնօ
54.— Երիտասարդ Հայաստան	Շիկաֆօ
55.— Վերածնութիւն	Պոսթոն
56.— Կռան	Շիկաֆօ
57.— Լուսաւորիչ	Շիկաֆօ
58.— Կոչնակ	Նիւ Եօրք
59.— Բուժակ	Բրովիտէն
60.— Աւետարանից Փողը	Տիքսօիք
61.— Յուշարար	Պոսթոն
62.— Տարոս	Պոսթոն

Ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ ցուցակէն, ամենէն շատ թերթ կը հրատարակուի Ամերիկայի հայկական գաղութիւն մէջ: 19 թերթեր:

Այս թիւը խոտոր համեմատական է այս գաղութի թէ թւին, թէ որակին և թէ գործին, սակայն ուղիղ համեմատական է իր... խօսելու մարմաջին:

Եթէ այս թերթերուն համար վատնուած եռանդը ի սպաս գրուէր Հայաստանի, ապահովաբար մեծ արդիւնքներ կրնայինք ձեռք բերել:

Գոնէ խօսելու իրենց մարմաջը գուրգուրանք մը ըլլար Հայաստանի շուրջ, դարձեալ մխիթարական երեւոյթ մը պիտի ըլլար ապահովաբար:



Արարիչը երկնի և երկրի, բա՛ց երկնքիդ բոլոր պողպատեայ դռները սա թշուառ հայ կոյսին առջև, այն դռները՝ որ դոց պահած ես դարերէ ի վեր բոլոր դթութիւն հայցող թոյլերուն առջև:

Ես այս առաւօտ հաստատ քայլերով և անխորտակելի կամքով է որ կուգամ քու դռներդ բաղխելու: Պիտի բաղխեմ այնքան ամուր՝ որ ստիպուիս ակամայ բանալ ոչ միայն երկնից դռները, այլ՝ ականջներդ՝ որ երկար ատեն է՝ բուրդ թխած չես լրսեր ինձ նման ողորմելի արարածներու տկար ձայնը:

Որոչա՞ծ եմ ես այնքան ուժով ճշալ ականջներուդ, որ դահդ հիմէն սարսի և հրեշտակներդ ահու սարսափի մատնուին:

Ի՞մ ցաւերս այնքան շատ են ու այնքան ծանր որ այլ ևս չեմ կարող հանդուրժել քու լուռութեանդ ու խլութեանդ:

Ես չեմ դար քու առջևդ այնպէս ողորմելի ինչպէս իմ քոյրերս թրքահայաստանի մէջ: Դու անոնց ականջ չի կախեցիր, գիտեմ: Բայց ես անոնցմէ չեմ ևս ազատ Ամերիկայի աստեղադարդ դրօշին տակ մեծցած հայ աղջիկ մըն եմ, որ վախ չեմ գիտեր քանզի հոս չեն քու մտերիմ բարեկամներդ՝ թուրքու թաթարը, քուրան ու արապը և ընչաքաղց ֆրանսսան:

Ահա իմ բուննչքս՝ կը բարձրացնեմ զէպի վեր, խորտակելու հինչած գահգ, եթէ չի լսես գանգատներս և օգնութեան չը հասնիս թշուառիս, որուն սիրտ տուիր սիրելու, որ սակայն կը սուտորի իր Երազին ճամբան նայելէն ու դալստեանը սպասելէն: Ո՞ւր է, ո՞ւր է սիրականս, ապագայ լծակիցս:

Դու գիտես Տէր, թէ ես որքան գեղեցիկ և սրբան սիրուն աղջիկ մ'եմ, բայց մարդիկ կարծես կամաւոր կոյրեր դարցած են և չեն տեսներ ինձ նրման բարի, առաքինի և համեստունակ աղջիկ մը:

Դու գիտես թէ Աշամը չի կրցաւ առանց ընկերի ապրել, բողոքեց քեզի և դու անոր Եւան տըւիր: Ո՞ւր է իմ ընկերս, ո՞ւր է իմ սոխակըս:

Աշխարհիս վրայ գոյութիւն ունեցող բոլոր կենդանիները, թեաւոր թռչունները, սողունները և ծովին ձուկերը, իրենց ընկերը ունին, իսկ սա հէք աղջիկը կանցունէ իր թարմութեան օրերը առանց սիրելու ու սիրուելու, առանց սոխակին գեղգեղը լըսելու:

Ինչո՞ւ, ըսէ, ո՞վ Տէր, ինչո՞ւ: Արարիչդ ամենեցուն, կըսեն թէ առանց քու հրամանիդ ծառին մէկ տերեւը անգամ չի չարժիր. կը ջանամ հաւատալ բայց ինքզինքս չեմ կրնար համոզել:

Թէ ինչու Տէր, ահա ըսեմ քեզի: Այս աշխարհի վայելքները տուած ես միշտ չարերուն անոնց՝ որոնք քու սահմանած օրէնքներուդ ահանջ անգամ չեն կախեր:

Նայէ, սա Աստղիկներուն, Արթիկներուն ու Զարդիկներուն, որոնք իրենց մօրերուն մանածր վաղուց ծախած են, բայց դարձեալ իրենց ուզած

լաւ տղայոց հետ շատ անգամ կը յաջողին բաղդաւորուել: Աշխարհը չարերուն է:

Աստուած իմ, ինչո՞ւ չես բանար սա կարգ մը հայ տղայոց աչքերը, որ տեսնեն բարին ու չարը, գեղեցիկն ու սգեղը, համեստն ու անպարկեշտը, բարոյականն ու անբարոյականը: Եւ տուր դատողութիւն որ կարողանան դատելու իրենց ապագայ լծակիցը ընտրելու ժամանակ: Որ չը խաբուին Արթիկներուն կեղծ ժպիտներէն, որ մահացու նետեր են, չը տարուին անոնց ձեւերէն և թունաւոր համբոյրներէն:

Քանզի իրենց իրիկուան ժամերը թատրոնի և պարահանդէսներու մէջ անցնող աղջիկները չեն կարող կին ըլլալ, տուն պահել և առոյգ զաւակներ ժմնցնել իրենց ազգին: Իր երեսները տեսակ տեսակ փոշիներով և գունաւոր իւզերով ներկող աղջիկ մը՝ չի կրնար իր էրեկը երջանկացնել:

Իր աչքերուն թարթիչներն ու կոպերը ներկող աղջիկ մը՝ իր յետին միտքերը չի կրնար չունենալ: Իր շրթունքները կարծիր ներկող աղջիկ մը՝ չի կըրնար միամիտ ազաւնի մը ըլլալ: Իր յօնքերը փետտող և մկան պոչիկ մը թողող աղջիկ մը՝ երկնքի վերայ չի մտածեր երբէք: Իր գլխուն մազերը հազարաւոր ծոպերով ու գանգուրներով զարդարող աղջիկ մը՝ մայրութեան վրայ դադափար չի կրնար ունենալ: Իր թափանցիկ բաձկոնին թեւերը մէկ մատնաչափ թողող աղջիկ մը՝ թիթեռնիկի մը պէս միտայն կրակին է որ կը վազէ:

Իր լանջը մինչև ծծիկները բաց հագուող աղջիկ մը՝ չի կրնար անմեղ դառնուկ մը ըլլալ, իր ծծիկ-

ները թափանցիկ բաճկոնէն դիտմամբ դուրս ցցող աղջիկ մը՝ երիտասարդներու վառ աչքերէն չի կրնար վրիպիլ:

Իր ետեւը բարձիկներով ձեւաւորող աղջիկ մը՝ չի կրնար Ադամին ու Եւային կերած պտուղը ձաշակած չ'ըլլալ:

Իր շրջազգեստը մինչև ծունկերը կարճըցնող աղջիկ մը, օձերը իրեն հրաւիրելու կը ծառայէ:

Իր դուրպաները նուրբ ու թափանցիկ հագնող աղջիկ մը՝ չի կրնար իր միտերը չար աչքերէն պաշտել:

Կրունկները թիզ մը բարձր կօշիկներ հագնող աղջիկ մը՝ գիտե՞ս ինչի կը նմանի՝ Ադամն ու Եւան խարող օձին ու սատանային:

Ինչու Տէր, ինչո՞ւ այսպիսիները չես պատժեր, չէ՞ որ առանց հրամանիդ ետրև մ'անդամ չի շարժիր:

Խեղճ Ադամն ու Եւան ինչո՞ւ դրախտէն վճռատեցիր: Գիտե՞մ, ինչու, որովհետև քու պաշտօնէրդ չի պահեցին, արգիլուած պտուղէն կերան, ինչպէս «ասպետական» Փրանսան կերաւ Կիլիկիան:

Ինչո՞ւ չես պատժեր այս չարագործները, այ՛ աբարիչ Աստուած:

Գու ծերացած ես, ձայն ծպտուն չես հաներ, կերելի զղջացած ես Ադամը Եղեմական Պարտէզէն դուրս վճռուելը ու ատոր համար ազատ ձգած ես ամեն ոք, իր ուզած պտուղէն ճաշակելու:

Սյդպէ՞ս է: Եթէ այդպէս է:

Ուրեմն իմ օրինապահ ըլլալս յանցապարտութիւն է: Մեղանչել է:

Չէ՞ որ ես ալ աղջիկ եմ: Ես ալ հանճարներ կը

սիրեմ վայելել. բայց քու տուած պատուէրներդ և ծնողացս տուած բարի խրատներն ու օրինակները զիս հեռու պահեցին աշխարհի վայելքներէն և հիմա իմ մեղքս ի՞նչ է որ Արթիկն ու Չարդիկը իրենց լծա կիցը ունեցան իսկ ես որ մաքուր կեանք մը ապրեցայ, մեր հայ տղայքները չը գնահատեցին զիս, չի հրապուրուեցան ինչ. ու ցոփ կեանքը ապրող թիթեռնիկներու ետեւէն վազեցին շարունակ: Ես մնացի միս մինակ իբրև մի չորցած ծառ անապատին մէջ. կսպասեմ փայտահարին որ դայ կտրէ արմատէս ու կրակին յանձնէ:

Քսան և չորս տաքուկ ամառներ եկան ու անցան գլխուս վրայէն, կարծես թէ գարնան արեգակը տեսած չեմ, Տէր, երբ պիտի դայ իմ կանաչ և ծաղկաւէտ գարունս: Ըսէ, Տէր, ո՞ր է իմ ստիակըս, ես սրտատրոփ անոր գալստեանը կսպասեմ:

Ըսէ Աստուածս, Ե՛րբ... Ե՛րբ, պիտի դայ սոխակս ու թեթեւօրէն թափ թուփիս վրայ և գեղգեղէ իր սիրոյ մեղեդին, որ ես գոչեմ, փառք քեզ Տէր փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի:

Սխալ պահուած էր պատին ետեւը և Շողերին ամեն մէկ խօսքերը կը լսէր, կսպասէր պատե՛հ առիթին որ Աստուծոյ կողմէն ինքը պատասխանէր Շողերի դանդառներուն:

Սխալը շատ կը սիրէր Շողերին հետ կարգուիլ բայց Շողերը իր բարձր նկարագրովը ինքզինքը անմատչելի դարցուցած էր: Շատ երիտասարդներ անոր սիրովը հալ ու մալ կըլլային, բայց չէին համարձակեր անոր ձեռքը խնդրել: Շողերը լուր չուներ այս բաներէն: Սխալին բաղդը ժպտեցաւ ու

*Իբրև Արարիչը բամբ ձայնով աշարէս խօսեցաւ
պատի ետեւէն :*

Շողեր , Շողեր ,
Ազնիւ Շողեր ,
Տերդ քեզ չէ
Մինակ բողեր :

Դուն ալ ունիս
Քո Պարմանին ,
Որ պիտի տայ
Դեղ քո սրտին :

Դա Սիսակն է ,
Քո դրացին .
Շատ կուտ ունի
Մէջ իւր գլխին :

Քեզ կը պաշտէ
Բոլոր հոգով .
Ան՝ Սիսակը
Դու իմ կամքով :

Ես միշտ վերէն
Ձեզ պիտ հսկեմ .
Ձեր սրտերուն
Միշտ սէր տածեմ :

Վաղը Սիսակն
Քեզ մօտ դրկեմ ,
Զինք չը մերժես ,
Քեզի կըսեմ :

Ան՝ Սիսակը
Իբրեւ սխալ ,
Որ գեղգեղէ
Երգ ներդաշնակ :


Ահա՞ այս է
Ձեզ իմ կտակ .
Երկար բարակ
Զը մտմտաբ :

Երբքաբ ժամը
Դու և Սիսակ
Երկուքդ մէկ
Մարմին ըլլաբ :

Շողերը կը պատասխանէ

Շատ լաւ , Տեր իմ ,
Ես կ'ընդունիմ .
Բա՛յց Սիսակը . . .
Ո՛հ . . . չը գիտեմ :

ԾԱՂԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅ






ԳՐԱՍՏԵՆ և **ՋԱՐԵԱՆ**
Braves & Javian

ՏԱՆ և ուրիշ **Այլի**

Անշարժ կալուածներու Գործակալք
ՅՐԵՂՆՈ ՔԱՂԱՔԻ և ԳԱԻԱՌԻՆ ՄԷՋ
 Գրասենեակներ՝ 119-120 Կոնստանդնուպոլիսի շեն-
 ֆին մէջ, թիւարի և ձեյ փողոցներու անկիւնը

Օֆիսի թէլեֆոն՝ 5437
 Տան թէլեֆոն՝ 2133 W

NOTARY PUBLIC

RELIABLE TIRE CO.

REPAIRING AND VULCANIZING

Dealers in all Standard Makes of Tires

1912 Inyo St. Phone 2368 Fresno, Cal.

Հայրենակիցներ,

Երբ ԹԱՅՐԻ նեղութիւն ունենաք մեզ դիմեցէք, միշտ պատրաստ ենք ձեզ ծառայելու մեր երկար տարիներու փորձառութիւնովը:

Կը ծախենք ամէն տեսակ ՍԹԷՆՏԸՐ ԹԱՅՐԵՐ, ԹՈՒՊԵՐ և մասնաւորապէս U. S. ROYAL CORD ԹԱՅՐԵՐԸ:

Կը նորոգենք ձեր հինցած թայրերն ու թուպերը: Մեր նորոգումները կ'երաշխաւորենք:

Որեւէ ատեն ճամբան թայրի նեղութիւն ունենաք մեղի թէլէֆօն ըրէք, մեզ միշտ պատրաստ պիտի գտնէք ձեզ ծառայելու:

Մի մտնաք, մեր թէլէֆօնի նըմպըրն է՝ 2368

ՎԱՀՐԱՄ ՈՒԶՈՒՆԵԱՆ



H. K. Terzian

PARISIAN TAILOR

PHONE 4552

851 Jay Street

Fresno, Cal.

ՅԱԿՈՒ Գ. ԹԷՐԶԻԱՆ
ԲԱՐԻՉԵԱՆ ԴՆՐՁԱԿ

Կը կարեմ արանց և կանանց հար
ամէն տեսակ հագուստներ

Ինը տարուան փորձառութիւնս երաշխեմ
մըն է ձեզ գոհ թողելու: Դիմեցէ՛ք Էպիտի
Համոզուի՛ք:



**ՖՐԷՉՆՈՅԻ ՄԻԿԿ
ՐԷՏԻՅԵԸՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ**

Տէր և Տնօրէն

ԳՐԻԳՈՐ ԹՕՄԱՍՅԱՆ

735 ՊՐՕՏՈՒՒՅՅ ԹԷԼ. 647

ՖՐԷՉՆՈ, ՔԱԼ.

Օթօմոպլըդը երբ կայծը կանէ,
Վայրկենական նա կը կըրակէ.
Այդ առաջ եկած պոյճիւնէն անյադ,
Սիլինարները կը դառնան կրակ:

Որեւէ մետադ թէ այդպէս տաքնայ,
Անոյամանօրէն պիտի ընդլայնայ.
Այդ վիճակին մէջ երբ օթօն ձրդենք,
Բիտօն, պերինկներ այրած կը դռնենք:

Իսկ եթէ ունիք ՌԱՏԻԱԹՈՒՌ մը լաւ,
Ջուրը իր մէջ կը պահէ միշտ պաղ.
Այն ժամանակը օթօդ քու աղուոր,
Առանց մաշելու կը մնայ միշտ նոր:

ՌԱՏԻԱԹՈՒՐԷ երբ որ կը ծակի,
Ջուրն ալ իր մէջէն երթալով հասնի,
Կամ իր մէջի մասն է աղտոտած
Եւ կամ ջրանցքներու շրջանն է գոցուած:

Այն ատեն դուն պէտք ըլլիտ՝ զդաս,
Մեր ԹՈՎԱՐԱՆՆԻՆ անպատճառ գրնաս.
ՔՈՎՄԱՍը մէկն է հըմուտ իր գործին,
Ֆրէզնայի մէջ ծանօթ ամենքին:

Գինն է չափաւոր, գործն է դիմացկուն,
Չեայ մի կասկած, հարցուր ամենուն,
Քաղաքիս մէջ էն նըշանաւոր,
Միքանիքներու և կարածներու:

500

ՎԱՐԴԱՆ ԼԻԼԵԱՆ
ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՔԻ ԳՈՐԾԱԿԱԼ
Կուգամ ծանուցանել իմ յարգելի յաճախորդներուս, որ ներկայիս ֆիսա կը դառնուի 1942 Քըրն փողոց:
Սենեակի նոմէր՝ 2
Թէլէֆօն՝ 1092

Վ Ր Ի Պ Ա Կ

- Էջ 52, 21-բէ տող
Գրուած է՝ որ այդ բակտերիաները առաւելապէտք է ըլլայ՝ որ այդ բակտերիան առաւելապէտ
- Էջ 66, 26-րդ տող
Գրուած է՝ (Դաշնակիին առաջ... պէտք է ըլլայ՝ Մէրի.— (Դաշնակիին առաջ...)
- Էջ 67, 24-րդ տող
Գրուած է ձԱՆ.— (Որ..., պէտք է ըլլայ՝ ձԱՆ.— (Որ...)
- Էջ 69, 6-րդ տող
Գրուած է՝ Նեղացա՞ր... պէտք է ըլլայ՝ Մէրի.— Նեղացա՞ր...
- Էջ 78, 25րդ տող
Գրուած է՝ Այս տունը թէյը, պէտք է ըլլայ՝ Այս տունը թէյըը

Հայաստանի Ազգային գրադարան

 NL0424944

13359

Telephone 1768

Auto Tires

Broadway Cyclery

AVAK AVAKIAN & PETER BEDROSIAN

Bicycles and Sundries

Expert Repairing

838 Eye Street

Fresno, Cal.

ԱՒԱԳ ԱՒԱԳԵԱՆ և ՓԻԹՐՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Կը յայտարարենք հայրենակիցներուն, որ անցած երկու տարիներուն եթէ մեզ հետ առևտուր ըրած և գոհացում գտած չեն, մեզ թող գան, դրամը յետ կը վերադարձնենք: Որովհետեւ մեր նշանաբանն է՝ ՅԱՃԱՅՈՐԴԸ ԳՈՇՁԳԵԼ:

Մի մոռնաք, որ Օթոմոսիի վերաբերեալ մասերը ևս կը պահենք:

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԿԱԼ

ԳԱՍՊԱՐԵԱՆ և ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

Կը գնեմք ԿԱՆԱԶ և ԶՈՐ պտուղներ

Օգիտ՝ 1942 Բըրն փողոց, Ֆրէզնօ, Կալ

Օգիտի Փօն՝ 1692

Տան Փօն՝ 1899 Էմ